

491.99-8  
U - 44  
1906

3206




ПЕРЕПЛЕТНО-ФУТЛЯРНАЯ  
МАСТЕРСКАЯ  
ПИСЧЕБУМАЖНЫЙ МАГАЗИНЪ  
ГРИНБЕРГЪ  
МОСКВА, Петровка.  
Тел. 204-97.

2010

2002

2. ИЗОБРАЖЕНИЯ





491. 99-8

4 - 44

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՈՒՍՈՒՄՆ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻՒ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

23-ՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԵԽԵՐԻ ԵՒ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԵԺԵՐԻ ՀԱՄԱՐ ԻԱՐԵՒ ԻՆՔՆՈՒԽՈՒՅԻՉԻՀ

ՀԱյութակի սեփական եւ պոխտդած յօդածների առ-  
տափակելու իրառութեարք վերապահուած է.

ԹԻՖԼԻՍ

Էլեկտրոպечатня М. Вартаняца, Гановск. ул. д. № 3.

Տպարան Մովսէս Վարդանեանցի

1906



27600 - 62


43266 - սե.



մ-տ ա մ





ման




մ-տ ա մ

մ մ | մ ա մ | մ ա մ | մ ա տ | մ ա տ | մ-տ ա մ



մա-տիտ




տաշտ

շիշ

շիշ	միշտ	մա-տիտ	տատի
իմ	տաշտ	շիմ-շատ	մի շիշ
մի	շտտ	մի-ա-միտ	մի մատիտ

շիշ շաշտ մատիտ




# + սար արտ

Մա-սիս	արտ	Արա-րատ	Ա-րամ
ա-սա	տար	ար-մատ	Ար-շամ
ա-րա	սիլտ	ա-միս	Ար-մաշ

Ճա-միր, արի մի մա-տիտ տամ:

Ճա-միր-րամ, ա-րի, մի մա-շիկ տար տա-տիտ:



տուն  
շուն  
մուր




շուն  
նուշ  
տուր

# տուն

# շուն

Արամ, ուրիշի նս-տա-րա-նին մի՛ նստիր:  
Ճա-մի-րա-մը մի սի-րուն մա-տա-նի ունի:  
Ա-սա-տուր, արի շուտ-շուտ ասա—  
Տարամաս—տարամաս—տարամաստարտ:



կա-տու

կը-տակ

կը-րակ

կը-տամ



մու-կը




ընկ-նիմ  
ընկ-նիս  
ընկ-նի

կա-տուն


ու մու կը

Մա-կար | Ար-շակ | Կամ-սար | Նու-նիկ | Ճու-շիկ

Ուշի—Ուշական—Մաստարա  
Կամսարի կրակին կասկարա



կասկարա




է	էին	տէր	է-միլ
էս	ասէի	սէր	Սու-ըէն
էն	ասէիլ	մէկ	Ար-սէն
էի	ուտէիլ	էմին	Կա-րէն
էիր			
էր			



ԷՇ

Տէր Ար-սէ-նը Սուրէնի տանու տէր-տէլն է:  
Է-մի-նը շատ է սի-րում իր տա-տի-կին:



5)


### Մինասի էշ

Մինասի էշը մտնում է էմինի արտը էմինը ասում է:  
—է... իշտէր Մինաս, իշտէր Մինաս... էշն արտն  
ուտում է:

Մինասն իմանում է, սուս է անում: էմինը կը կնում  
է իրանը, Մինասը սուս է: էմինն ասում է:  
—էշ, էշ, արտս Մինասն է ուտում, արի սբան տար:



Մինասի էշը արտումը




Ե  
ե  
ես  
եկ  
եմ

Ե  
եզ  
զ  
զուր  
զուտ

### Եղ-Ներ

մեր	ե-րես	նա-ղիկ	Զա-նա-դան
կեր	ե-րազ	եղ-նիկ	կե-րա-կուր
սազ	ա-զատ	Ար-զու-ման	ե-րե-րուն
կազ	Զա-նի	ե-րե-մի-ա	եղ-նե-րում

Արամն ու Ար-զու-մա-նը ըն-կեր-ներ են:  
Նազիկը երկար ու շէկ մազեր ունի:



### Արզումանի եղը

Ձ Արզումանը մի եղն ունէր՝ անունը Կարմիր: Կարմրին  
շատ էին սիրում Արզումանի տանը ու նրան կերակրում  
էին շուտ շուտ: Նրա մազերը կարմիր էին ու սիրուն:

### Արամի եղը

Արամը եղն ունէր, մի շատ սիրուն եղ.  
Միրուն, սիրուն, մի շատ սիրուն եղ:

+ **K**

Անունը կարմիր էր, մազերը կարմիր.  
Կարմիր, կարմիր, մազերը կարմիր:  
Կարմրին սիրում էին նազիկն ու ջանին:  
Ջանին, Ջանին, Նազիկն ու Ջանին:



Սա է Արամի եղը

**n**




**h**

3XII  
**nqñh**

**hunq**

զոխ	խոզ	որս-կան	մա-խոխ
սա	մուխ	կը-տոր	մե-խակ
ոստ	խակ	խը-մոր	մա-նուշակ
որ	սոխ	մո-խիր	Աս-տրա-խան
խոտ	ոտ-ներ	մո-թեխ	Սու-լա-խան
խոր	ոս-կի	մո-րի	շի-րա-խանա

+ Սոխն ու սըխտորը իրար շատ են սիրում:  
Սոխը մէկ է, սըխտորը երկու:



29IX  
**Ըլկան խրատը**

Պզնին շարունակ մըկնիկներ էր որսում ու իր ոզնիկներին կերակրում: Մի սիրուն մկնիկ մի կատու է տեսնում ու ասում նրան:

—Մեր տէր ու տիրական Կատու, Ոզնին մեզ կոտորում է. արի ազատիր մեզ:

Կատուն ասում է.

—Եկ իմ կշտին ազատ ման արի, ես կըսաստեմ Ոզնուն:

Մըկնիկի մէրը տեսնում է որ կատուն սրում է տապաները, ասում է.

—Իմ սիրունիկ մըկնիկս, Կատուն կըսաստի ուրիշներին, որ մեզ մենակ կոտորի:

—Ու—ու—ու... զարմանում է մկնիկը ու շուածնում է իր տնակը:

**4**



**չորս**

**լաւ**

**nչխար**


ոչ | չը | չի | չէ | չեմ | չես | չի | չիր | չէր

ինչ	չիր	չըն-չին
ինչու	չան	չա-չա-նակ
շորս	չիմ	Խա-չիկ
չոր	չա-միչ	Խա-չա-տուր
չար	ոչինչ	Չի-նաս-տան

Չի-նաս-տա-նը մի ուրիշ երկիր է:

Տատիկը Խաչիկին ասում է.—Խաչիկ, ա-  
րի, չիր ու չամիչ տամ, կեր:

Խաչիկը չի ուզում, ասում է.—Ես չիր ու  
չամիչ չեմ սիրում:



### Ոչխարն ու խողը

~~10 X //~~  
Խողը ոչխարի կշտին արմատներ եր ուտում, ոչխա-  
րը տեսնում է նրան և ասում է.

—Մէրունիկ, ինչու խոտ չես ուտում:

—Ես կուշտ եմ, ասում է խողը:

Ոչխարը զարմանում է, որ խողը կուշտ է: Ասում է.

—Որ կուշտ ես, ինչու արմատներ ես ուտում:

—Արմատները անուշ են ու մարսական, չարազ եմ  
անում, —ասում է խողը, որ ամեն ինչ ուտում էր ու իս-  
կե չէր կշտանում:

### Ը Ն Ո Ւ Ն Ն Ե Ր


Արմիկ, Արշակ, Նունիկ, Խորէն,  
Մինաս, Խաչիկ, Անուշ, Սուրէն,  
Խաչատուրն ու Աշխէնն ուր են:





## ՌԼԻԴԻ ԱՐԱԴԱՐ

աղ	քեզ	զէնք	քար-տաշ	քա-նոն
մաղ	քիշ	չտղ	տա-րանք	քա-մար
քաղ	մենք	տաղ	բա-ղաք	խա-դող
բռ	չենք	սաղ	կե-րանք	քա-դող
քոր	շէնք	ուղտ	կու-տենք	մա-դող

Կար-մրա-կա-տար ա-քա-ղաղ-ներ,  
Ոս-կե-կա-տար կուկ-րի-կու-ներ,  
Ճուտ արէք, շուտ, եկէք, կերէք,  
Կուտ կերէք, կուտ, ու շուտ կորէք:



*աւ եւ իւ*



*հաւ տեր եւ*

*ան իւ*

հա	հաւ	տե-րի	ա-նիւ
ահ	կաւ	ի	հաշիւ
տհաւ	նաւ	սև ու խե	խըստիւ
համ	խաւ	Սևան	հրա-ւէր
հոտ	արաւ	Երևան	հրա-ւի-րակ

Հաւը հաւին կը հաւանի:

Հաւը տանը կենա, կուտն ուտի:

*հաւ հաւ ան հաւ մար մակ  
հան ես հաւ ան հաւ մար*

*գրեթե Երևան Ան ան հան  
Ան դաւան աւազան*

*Աքաղաղի հրաւէրը*


Աքաղաղը հարևանի հաւին հրաւիրում է կուտի. ա-  
սում է. արի կուտ տամ, կեր: Հաւը չի հաւատում, ա-  
սում է. «Կուտ ունենաս, քո հաւերին կըտաս»:

Աքաղաղը շատ ինքնասէր էր. նա շատ նեղանում է  
ու կանչում է իր սուր կուկրիկուն.

—Ու—ու—ու... ուտ ունիմ...

—Կուկրի—կու... կուտ ունիմ...

Կանչում է աքաղաղը հաւերին, որ կուտ ուտեն ու  
հարևանի հաւը տեսնի, որ աքաղաղը կուտ շատ ունիւ:



*գորտ լուսին*

գալ գամ՝ գաս սագ գող զիր զէր  
սուզ տալ լալ սալ լտ լալկան  
լուսին լլսել լարել զըրել զըրող  
զընալ մընալ Գրիզոր Գէորգ  
Գալուստ Լուսիկ



սիրուն բաղիկ


Գրիզորը վնալու է Գորի:  
Գալուստը զոմ է շինել:  
Լուսիկը ս-րել է մ-կրատը:  
Մ-կր-տի-չը զըրել զիտէ:



Լուս զլուխ

Գէորգը մի նամակ է զրել Արամին:  
Մինասը գնալու է երևան:

3 XII



### Աշուղ Գէորգի խաղը



Դրիչ, արի, մի զիր զրեմ Գալուստին.  
Մի զիր զրեմ, նամակ զրեմ Գալուստին:  
Մեր Գալուստը ինքը զրել չըզիտէ,  
Նա ուրիշին զրել տալը լաւ զիտէ:  
Դրիչ, արի, մի զիր զրեմ Գալուստին,  
Մի զիր զրեմ, նամակ զրեմ Գալուստին:  
Ես Գէորգն եմ, երգել զիտեմ, զիր զիտեմ,  
Գրել զիտեմ, խաղերըս անզիր զիտեմ:  
Հիմա կուզեմ մի զիր զրեմ Գալուստին:  
Մի զիր զրեմ նամակ զրեմ Գալուստին:



այլ սայլ այս  
այն հայր մայր  
Հայաստան




հայ չայ լայն  
հայրենիք  
Եսայի այրի

23

### զայլ

Իմ հայրը և իմ մայրը գնալու են Հայաստան:



### Գայլն ու աղւէսը

Գայլն ու աղւէսը ընկերներ էին. Մէկ անգամ Աղւէսն ասում է գայլին.

— Սիրելի գայլիկ, ես մի հաւատան տեղ զիտեմ զեղումը, կըգնամ մի քանի չաղ հաւ կընտրեմ, կըհանեմ, միասին կուտենք:

Գայլն ասում է.


— Ես հաւի միս չեմ սիրում. Ես էլ կըգնամ ոչխարի սուրուն, մի չաղ ոչխար կընտրեմ. ոչխարի միսը շատ համեղէ լինում:

Աղւէսը գնում է հաւի, իսկ գայլը — ոչխարի: Աղւէսը մի հաւ է գողանում, իսկ գայլին շները տեսնում են և համնում ու մի լաւ զըդգըզում:



23 X

Սա է գայլի ընկեր աղւէսը




նա-պաս-տակ

## պոչ

կա-պիկ

պապ կապ պատ պար պաղ պոչ պինչ պարապ  
պապիկ պատիւ պիտանի պէտքական պապական  
պէտք պարան պարոն այսպէս այնպէս պակաս  
պսակ ըսպաս պարտք պարտական Կարապետ  
Պետրոս Հայրապետ Մարտիրոս



## Աշխատասէր Պետրոսը

Պետրոսը ու-սում-նա-րա-նի աշակերտ էր. Նա գիշե-  
րը զիր շատ էր գրում լամպի լուսումը. Մի գիշեր էլ ա-  
սում է մայրը. \*

—Պետիկ, մատաղ, հերիք է ինչքան որ գըել ես,  
էլ մի գըիլ, լամպի լուսումը երկար չեն գըիլ, աչքերի  
համար լաւ չէ. Պետրոսը պատասխանում է.

—Մայրիկ, քիչ էլ սպասիր, այս ըոսէիս  
կաւարտեմ: \*




Եւ Պետրոսը նախ աւարտում է իր գըելիքը  
և ապա գնում հանգստանալու:

Պատիկ լամպա

381

բ



դ

## բաղ

## մանակ

բագ բակ բան զա զու զաս զող  
սարդ մարդ զարդ բարի բերան  
բու զէզ զանակ Դերենիկ Բաղալ  
Բարսեղ Դանիէլ Դէրբէնդ Բագ-  
րատ Բաղդասար




Դերբէնդն ու Ղուբան Դաղստա-  
նումն են:

Դաղստան են ասում սարս  
երկրին:

Դաղ—նշանակում է սար: Ղա-  
րաղաղ—նշանակում է Սև-սար



27600-62



Աւետիսի երգը

4 նոյ. 09

Մելքոն, Գառպար և Բաղդասար.

Աւետիս.

Նորանըշան մի աստղ տեսահան. Բիблиոթեկա  
Աւետիս.



*Եղանք և*

+ Երբ Բէթլէհէմ ըաղաքն հասան.

Աւետիս.

Մի խոր ու լայն քարայր մըտան.

Աւետիս.

Այնտեղ գըտան Սուրբ Մայրիկին.

Աւետիս.

Ամենասահրբ Մանուկ զըրկին.


Աւետիս.

Թանդ պարգներ տըւին նըրան.

Աւետիս.

Ոսկի, կընդրուկ շատ պատւական.

Աւետիս.



կաց լաց ցեց բաց բայց այց ցաւ ցանք ցախ  
ցեխ ցամաք ցորեն ցերեկ գրեցի գրեցիր գրեց  
գրեցինք գրեցիք գրեցին գնացի գնացիր գնաց  
գնացինք գնացիք գնացին իմացար իմացաւ  
իմացանք իմացաք իմացան Մնացական

*ց ց ա ն ց . ց ո ց ա ն է . Բ ա ն ա ն ց .  
Դ ա ն հ ե ն ց . Մ ա կ ա ն ն մ ո ց ա ն է*

Արմիկն ու Արշակը

— Ես մի նամակ պիտի գրեմ հայրիկիս, — առում է Արմիկը:

— Ի՞նչպէս կըգրես, քանի որ բոլոր գրերը չըգիտես,  
հարցնում է Արշակը:

— Ինչքան որ գիտեմ, այնքանն էլ կըբաւէ, պատաս-  
խանում է Արմիկը: Բացի զրանից, ինչ գիր որ չըգիտեմ,  
ես կարող եմ նրա տեղ մի խաչ դնել: Դիցուք՝ պիտի  
գրեմ տետրակ, բայց ո գիրը չըգիտեմ, ես կըգրեմ տետ-  
+ակ, կամ Մարգարիտ՝ կըգրեմ Մա+գա+իտ:

— Հասկանում եմ, այդ կարելի է: Զէ, ոու շատ լաւ  
ասացիր. ես էլ էկուց իմ մայրիկիս կըգրեմ նամակ:

Լրացրէք այս բառերը

Մա+կոս. Գարե+ին. Մանու+ակ. Մար+իս. Մի-  
+աս. Ծաղի+. Կիրա+ս. Մկր+իչ. Վարդապ++.  
առաջն+++. եպիսկո+++. եկեղ+++. Կարա+++.  
Մարտի+++. 11 Մայ



ով



կով

վարդ

ով կով սով հով զով վար վատ վաղ վիշ վուշ  
վիշտ վաշտ վարս վարք վանք վաղը վազել  
վարել տարով բարով սարով բարով տանով  
տեղով գրով գրելով կարդալով գնալով զալով


+ Վան Վահան Վարդան Վարդուհի Վաղինակ  
Վարսենիկ Վաղարշապատ վարդապետ վանահայր  
վանքական վեղար վեղարաւոր

Վահագը վանքի վարպետն է:

Վաղինակը զնացել է Վրաստան:

Վարդանն ու Վասակը իրար բարեկամ չեն:

10X1.



### Կովի մասին

— Վահան, ՞ու ի՞նչ կասես. կովն ի՞նչ է  
տալիս:

— Կաթ:

— Աստ — Կովը տալիս է կաթ.

— Կովը կաթ է տալիս:


— Չատ լաւ, կովը կաթ է տալիս: Ես կաթը կրպեմ դաստանն զրատախտակի վրայ ու  
գուր կրտեսնէք, որ մենք մի նոր գիր գտանք,  
որ է թ.

— Ուրիշ ի՞նչ կարող էք ասել, որ նրանում  
այս գիրը լինի: Ես կասեմ ահա մի քանիսը —  
թաթ, թոթ, մոթ, թել, թիզ: Հիմա գուք  
ասացէք:

— Հիմա ուրիշ բան պիտի հարցնեմ: Կաթը  
որ մերում են, դրանով ի՞նչ են շինում:

— Մածուն:


— Ուզիդ է մածուն: Հիմա ես կրպեմ մա-  
ծուն, գուք կրտեսնէք, որ էլի մի նոր գիր գր-  
տանիք, որ է ծ: Եկող երկու դասին մենք այդ  
երկու գիրը կըսովորենք:



### Ճառ

Ճիճեռնակներ

առ տառ ճառ առած ծըռած ծըռ-մը-ռած  
առած սառած մեռած ծիծեռնակ բառ բառով  
տառով աստառ բարբառ մառան գառնալ պայ-  
ծառ կայծակ կուռը գուռը նուռը ծուռը խառը  
գառը սառը ամառը ուսմիկ Ռոստոմ ծատուր  
Աստ-ւած Աստ-ւա-ծա-տուր:





## Տառախաղ

Ասատուրը մի լաւ տառախաղ գիտէ: Տեսէք ահա ինչ  
է անում: Բառի տառերը ցրւում է, այսինքն՝ գրում է  
ցրիւ, գտնողը պիտի գտնի՝ ինչ բառի տառեր են և  
կազմի այն բառը: Դիցուք՝ մեր ունեցած բառն է—մա-  
տիտ: Մենք գրա տառերը կըգրենք ցրիւ, այսպէս ահա  
ա-ի-տ-տ-մ

գտնողը շուտ չի գտնիլ, նա կասէ—տիտմա. տամտի.  
տատմի. միտատ. մինչև կըգտնի մատիտ և կըտեսնի  
որ ուղիղը այդ է:

Ահա այս տեսակ հեշտ գտնելու տառախաղ

ու-ա-տ-կ  
ը-ու-կ-մ  
ա-ա-ը-կ-ս  
և-ա-կ-շ-ը


ա-ա-ա-դ-ո-ն-ի-ս  
և-տ-ը-ու-ս-ա  
ի-ա-ծ-ն-ը-ի  
ի-ե-ա-ծ-ծ-ն-կ-ո-ո

# Թիթեռ

Թաթ թութ թուր ութ կաթ թլուշուն երկու-  
շաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի,  
ուրբաթ, շաբաթ, կիրազի:

Թիթեռի թերը շատ բարակ են լինում:  
Թամարը երկու կթոց թուզ է բերել:  
Թամարի հայրը գնացել է Թաւրիզ:  
Թոմասի տանը շատ թուրքեր կան:

25 ♂



## Գառնուկ

Մի լար, գառնուկ սիրական,  
Պըստիկ տըղի զու նըման,  
Կըզա մայրըդ, հետը շատ  
Կըբերէ ըեզ անուշ կաթ:

շ-մ-մ-ա-ա  
Մ-ն-ս-ի-ա  
Մ-կ-ը-ա-ա  
Ղ-զ-ը-ա-ա

## Ճուշան


Իմ սպիտակ թերթերում  
Մեզու, ըզէզ և թիթեռ  
Կարող են հանգիստ գտնել  
Իբրև ազնիւ զեռուներ:

կ-կ-պ-ի-ա  
զ-շ-ն-ու-ա  
թ-մ-ը-ա-ա  
թ-մ-ս-ա-ա

## Կոռնիկներ

Կը՛ռ, կը՛ռ, կըռ-կըռան,  
Կըռունկները հա թըռան,  
Կըռունկների թեփ տակ  
Եկառ ամառ մեր զըռան:

ու-կ-կ-ն-ո-ո  
ա-ու-գ-ն-ո-կ  
ի-ե-թ-թ-ո-ո  
մ-ու-դ-ե-ե




# առիւծ

իւր իւղ գիւղ շիւղ բիւրեղ կիւրեղ աղբիւր  
միւս հիւս հիւսիս արիւն հարիւր ծերութիւն  
գերութիւն գիտութիւն ծուլութիւն պատմութիւն  
տէրութիւն պետութիւն գրութիւն

ա—ա—լ—ն—ս  
ա—ի—ր—ծ—ւ  
ու—թ—ն—ո—չ  
ա—ա—ն—գ—զ

Արծիւը թոշուն է,  
Առիւծը գազան,  
Արծիւը զուզունն է,  
Առիւծն է ասլան:



8 սեպտեմբերի 969

## Արշակի նամակը

Սիրելվ մայրիկ.  
Ես հիմա գիտեմ գրել ու կարդալ: Տես ահա նամակ  
եմ գրում քեզ, որ կարդաս և ուրախանառ: Ես գեռ բոլոր

գրելը չըգիտեմ: Երբ որ բոլորը սովորեմ, աւելի շուտ  
շուտ կըգրեմ: Հիմա այսքանս բաւական է: +

Հայրիկիս ասա որ գրելու տետրակներ շատ առնէ:  
Մեզանում շատ են գրել տալիս, շարունակ գրում ենք ու  
գրում: Առաջ մեր գրածն ենք կարդում և ապա տպածը:

Յըտեսութիւն, մայրիկ:

Քո Արշակ:



# Չորի



Չութակ

Չուր չիլ աջ էջ մէջ ունջ մունջ ջանք քաջ եղինջ  
ականջ ջրկիր ջաղաց Ջաւահիր

1911  
ՀՀ. 11.

## Առածներ

Արիւնն արնով չեն լլւանալ արիւնը ջրով  
կըլլւանան: Ջուրն իր կնացած տեղովը կերթա:  
Մի աման ջուր, ով ուզի՝ տուր: Ջաղացն իր  
ասածը կանի, չանչախի գլուխը կըցաւի:

Ու եղցերու գորշակ զանի

Ջուսիր ջիսն զիր զինիզ.

## Հիկերասէր եղջերուներ




Մի ծաղկաւէտ և խոտառատ սարի վրայ արածում էին երկու եղջերու։ Նբանցից մէկը մի քանի խոտ ու ծաղիկ պոկեց և միւսին տրւաւ՝ ասելով.

— Ընդունիր, եղբայր, այս խոտը, թէև սա ոչ մէկիս պակաս չէ։

— Շատ և շատ շնորհակալ եմ, պատասխանեց միւսը, ինչո՞ւ չըշահենք մէկ մէկու սիրտ, թէկուզ մեզ անպահաս սարի առատ խոտով։

Փ



Վ

Վիհո

Վայտ վայլ վող թուփ քամի վակ տափ շափ ծափ լափ ափ վափա վափախ վառք վափագ

Փլղին ասում են վիլ։ Փիղը շատ վառահեղ կենդանի է։ Փղերը լինում են և ընտանի և վայրենի։ Վայրենի վղերը շատ կատաղի են լինում, երբ որ բարկանում են։

Փարսաղանը վղոսկրի առատով ոնի։

Վիհիդ վառ վ. վառվան  
վարսադան. վարսոն



Դ Ս Խ Յ

Կ ա տ ո ւ

Կատուն եկաւ, վիսիկ, վիսիկ,  
Հազար նազով, ինչպէս հարսիկ.  
Դունչը սրբեց թաթիկներով,  
Մազը սանդրեց շանչիկներով.  
Կատու, կատու, էր ես տրտում.  
Թէ մկներն են հիմա արթուն։  
Կատուն ասեց—միայն, միայն.  
Այսինքն թէ—այն, այն։


Մանուշակ

Կապոյտ վլխով, կանաչ ոտով  
ես ծաղիկ եմ անուշ հոտով.  
Թէև տունկս վոքրիկ է, ցած,  
Արօտներում միշտ թաք կացած,  
Բայց իմ վունջո ամենի տան,  
Թէ աղքատի, թէ մեծատան,  
Իբրև զարնան առաջին զարդ,  
Կարէ տեսնել ամեն մի մարդ։  
Ես եմ սիրուն զարնան գուշակ,  
Իմ անունը է մանուշակ։



# բոյն բաժակ

Ժամ կուժ ուժ ուժեղ ուժով այժմ բաժակ ժամ  
Ժամանակ արժանի ժողով ժողովուրդ ցոյց աւ-  
տղեցոյց մատնացոյց բոյն հաւաքոյն թոյն սոյն զոյն  
նոյն գոյն գոյն-ըգ-գոյն բայս լոյս կոյս կապոյտ  
քոյր ժամաժանք արժան:



ժամացոյց

Իմ ժամացոյցս շատ ուղիղ է  
բանում: Ժամացոյցն ունի երկու  
սլաք, մէկը ցոյց է տալիս ը-  
պէն, իսկ միւսը՝ ժամը: Ժամ ցոյց  
տրող սլաքը փոքր է, իսկ ը-  
պէն ցոյց տրողը — մեծ:

բոյն բաժակ բոյն լոյս  
նունչոց արժանի բոյն

ծիչը եհ բազէն


ծիտը ծառին ծըլւըլում է.  
ծիւ, ծիւ, ծիւ...

Բազէն զլխին պըտըլում է.  
վու, վու, վու...

ծիտը լրոեց, ծիտը վախեց.  
վայ, վայ, վայ...

Բազէ, թըլ՛ոռ, բազէ թըլ՛ոռ...  
հայ, հայ, հայ...

Բազէն թըլոաւ, բազէն վախաւ,  
ինչ լաւ էլաւ, հէ, հէ, հէ...



# ճանճ մուրճ

Ճանճ ճանկ կարճ ճրագ ճիտ ճիճու արճիճ  
ճախարակ ճարոար անճար հանճար ճառագայթ  
ճեմարան ճըշմարիտ ճահիճ ճրգուալոր  
ճրագի իր տակին լոյս չի տալ:  
Պտղատու ծառը ճղները կախ կըզըցի:


Յանճ. արեիտ. երազու...  
Երիտ. Յանճուշ. Երինչ.



Ճախարակի երգ

Մանիր, մանիր իմ ճախարակ,  
Մանիր, սիպտակ մալանչներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Որ ես հոգամ իմ ցաւեր:  
Հէթ իմ ածել ականջներըդ,  
Նոր շինել եմ շըրտըւիկ,  
Դէհ, շուտ շարժիր լայն թևերըդ,  
Ոստեր շինիր, սըրուլիկ:  
Էրգրանիկս գուլքա շունի,  
Հանդ է զընում դտաբաց,  
Գաբրիէլըս շուխա շունի,  
Միշտ անում է սուզ ու լաց:  
Հըւալ շունինք, շաթու շունինք,  
Ոչ սամուտէն, ոչ սլարան,  
Այսպէս աղքատ դեռ եղած շենք,  
Կըտըրել է ամեն բան:

Դեռ հարս էի, որ գործեցի  
Քանի կարպետ խալիչա,  
Բայց զրանցից շուտ զրկւեցի,  
Հիմա շունիմ մի քեչա:  
Կարմիր օրըս երք սեացաւ  
Եւ պարտք մընաց, թէկ քիչ,  
Պարտատիրոջ սիրոն էլ սեցաւ,  
Եկաւ տարաւ ամեն ինչ:  
Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր սիպտակ մալանչներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Որ ես հոգամ իմ ցաւեր:



Ձ Ձուկ

Ճի

Օրօրոց

օձ օր օղ օղ ձոր ձագ ձայն  
ձող ցող ձին ձեղ ձեռք ձէթ  
ձմեռ ձմերուկ տանձ խնձոր  
գանձ ուանձ



օձ


Խոսքը

## Առածներ

Անձրև օրը հաւերին ջուր տըսող շատ կըլինի:  
 Մի ծաղկից օձը թոյն է շինում, մեղուն — մեղը:  
 Օձի գլուխը որ ցափ, կըտանի ճանպաւմը կըդնի:  
 Օձն առաջ իր տաքայնողին կըկծի:

Խօսքը մերը, տունը մերը:

Մի ձեռքով երկու ձմերուկ չեն բոնիլ:  
 Աստած սարը կըտեսնի, ձիւնը կըդնի:



ի—ա զ—ձ—կ  
 պ—ը—ն—ա—ռ  
 ե—այ—դ—ը—ը  
 ա—օ—կ—ը—տ

## Վիճակի երգը

Սարի տակը բարստ է,  
 Պարնի ձիանց արօտ է,  
 Ահա օխտը տարի է,  
 Քոյլը եղբօր կարօտ է:

## Նոր տարու երգը

## Մանկական մաղթանը

Արի դու արի, քո գալըդ բարի,  
 Սիրուն նոր տարի, նոր օրեր բեր մեզ.  
 Զիւն տուր սարերին, անձրև՝ արտերին,  
 Կարկուտը չարին, զոյ արնը՝ մեզ.

Անթուփի ծաղիկից, աններկ կարմրուկից,  
 Բարի ցաւերից ազատ պահիր մեզ:  
 Մայրական զթով, զրկաբաց ձեռքով,  
 Ուրախ ժպիտով առ քո զիրկը մեզ:

1 2 3 4 5 6 7 8 9 10


մէկ երկու երեք չորս հինգ վեց եօթը ութ իննը տասը

առաջին
երկորդ
երրորդ
չորրորդ
հինգերորդ

կեցերորդ
եօթներորդ
ութերորդ
իններորդ
տասներորդ

կեցերորդ
եօթներորդ
ութերորդ
իններորդ
տասներորդ

Եօթը տասներօթը քսանըեօթը եօթանասուն  
 արդեօք կարծեօք եօնջա եօրդա գեօլ



Հայոց

Ե ա Ֆ

բարութեան չարութեան հետեւեալ ստորագրեալ  
 ստորագրեալ պաշտօնեա քրիստօնեա միմեանց  
 լուսնեակ որդեակ հոգեակ եազութեան Գեանչե-  
 ցեանց Եսայեանց Կարապետեան

Որդեակ, լսիր հօրըդ խրատը: — Արմիկ, հո-  
 գեակս, չարութիւն մի անիր: — Երեխէք, մի  
 կըռէք միմեանց հետ:



# Փայտոն

Գուրզօն Փրանսիա Աֆրիկա

Փայտ գոն. Փուր գոն. Փես.  
Էլփ. Կան Փետք. Փրանսիա Իս.

Հնչւում է ինչպէս (6)

յոյս յոյն յարդ յարդ յարկ յիշաւակ յիշել յանկարծ  
յայտնի յատակ Յիսուս Յակոբ Յովաէլ Յարութիւն  
յունար յունիս յուլիս յիսուն յաճախ յաջորդ յօժար

անձայն

Տղայ երեխայ ընծայ հսկայ արքայ ձանպայ օրւայ  
տարւայ վոայ աբեղայ առօրեայ: (Նա) գայ տայ լայ  
կայ գնայ մնայ աղայ կարդայ իմանայ մոռանայ:

Կիսաձայնաւոր

հայ վայ չայ փայ նոյ հայր մայր վայր ծայր  
գայլ սայլ վայլ այլ բայց այծ լոյս բոյս կոյս քոյր

Վերացած

սա գա նա սրս դրա նրա ահա հիմա (գու) ասա աղա  
արա կարդա խնդա գնա մնա (օտար բառեր և յատուկ  
անուններ) խաթա բալա մաշա բօշա ուստա Յուդա  
Երեմիա Իտալիա Ասիա Աֆրիկա Ամերիկա:



Խելօթ Գլոհինը

Բերանն ասեց. — Ես ամեն ինչ կուտեմ կըխըմեմ:  
Գլուխն ասեց. — Հըմ...  
Լեզուն ասեց. — Ես ինչ ուզենամ, կասեմ, կըխօսեմ:  
Դլուխն ասեց. — Հըմ...  
Զեռներն ասեցին. — Մենք ամեն ինչ կըշնենք, կը-  
քանդենք:

Գլուխն ասեց. — Հըմ...

Ոտներն ասեցին. — Մենք ամեն տեղ կերթանք, ման  
կըգանք:

Գլուխն ասեց. — Հըմ...

Բերանն ու լեզուն, ձեռներն ու ոտները ասեցին  
գլուխն.

— Ինչու ես «հըմ» անում:

Գլուխը պատասխանեց. — Ինչ անէք — չանէք, առաջ  
ինձ պիտի հարցնէք:

Ոտներն ու ձեռները կուշ եկան, բերանը մնաց բաց,  
իսկ լեզուն կակազելով ասեց.

— Համարդի է ասում գրգըլուլուխը...

Ոտքով ման եմ գալիս, ձեռքով աշխատում,  
Աչքովը տեսնում եմ, ականջով լսում.

Իսկ իմ չարն ու բարին, իմ լաւն ու վատը  
Ո՞վ է իմանում.

— Խելօթ գլուխս:

X. ~~Խելօթ~~ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԻՔՐ 9 477.09  
Ես ամեն ասեցին. Արե, արե, Եկ, Եկ, ;  
Նախշուն քարին վէր Եկ.

1912.

Նախշուն քարին արհամիկ \* արա,  
Մեր ոչխարին մտիկ արա,  
Իսկ գառներին ճիտիկ \* արա,  
Որ գայլը գայ՝ տուտիկ \* արա:

### ՄԱՆԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՔ

Արև, արև եկ եկ,  
Զիզի քարին վէր եկ:  
Սև—սև ամպեր հեռացէք,  
Արևին ճամպա տրւէք.  
Թողէք դա գայ մեղ մօտ,  
Դրա լոյսին ենք կարօտ:  
Կարմիր արև եկ, եկ,  
Նախշուն քարին վէր եկ:

Արևը յաղթեց ամպերին,  
Շողքը ձըգեց սարերին,  
Զիզի քարը, տես—տես,  
Պաղպում է ոսկու պէս:  
Սիրուն արև, միշտ եկ,  
Զիզի քարին վէր եկ:

### ՄՐՁԻՒՆ ՈՒ ՀՈՒՆ

Մրջիւնն ու լուն եղբայրացան և միասին գնացին  
դաշտ զբունելու: Այդաեղ դրանք դէմ առան մի առւի:

*Դրանք*  
Լուն ասեց.—Ես մի ոստիւ-  
նով կարող եմ թոշել առւի  
միւս կողմը, իսկ դու ինչ  
կանես: *Ճայլ.*

—Ես էլ կարող եմ ցատ-

կել, ասեց Մրջիւնը:


Լուն կուչ եկաւ, բոլոր ուժը հաւաքեց ու յանկարծ

\*) Մանկական բառեր են.—տիտիկ արա=նստիր: Ճիտիկ  
արա=զըգւիր: Տուտիկ արա=ծեծիր:

թռաւ առւի միւս կողմը: Մրջիւնը նոյնպէս բոլոր ուժը  
հաւաքեց, ցատկեց ու ընկաւ առուն: Նրա բախտիցը ջրի  
մէջ մի թռափ խոտ կար բըսած, ընկաւ խոտի վրայ և  
խեղդւելուց աղատւեց, բայց տեսաւ որ չըպիտի կարողա-  
նայ ցատկել միւս կողմը, կանչեց լու եղբօրը և ասեց.

Սիրելի եղբայր, ջուրը կըմեծանայ ու ինձ կըխեղդի,  
մի ճար արա, այս փորձանքիցն ինձ աղատիր:

Լուն թոշկոտելով հասաւ խողին ու ասեց. *Ճայլ.*



Խողիկ—խողիկ, մազիկ  
տուր, մազից շինեմ մի  
պարան, պարանը զցեմ ա-  
ռուն, Մրջիւն եղբօրս ա-  
զատեմ: *Ճայլ.*

*Ճայլ.* Խողը պատասխանեց.—Եթէ ինձ համար կաղին կը-  
բերէս...

Լուն թոշկոտելով հասաւ կաղնի ծառին ու ասեց.



Կաղնի—կաղնի, կաղին  
տուր, կաղինը տամ խողիկին,  
խողիկն ինձի մազիկ տայ,  
մազից շինեմ մի պարան,  
պարանը զցեմ առուն, Մր-  
ջիւն եղբօրս աղատեմ:

Կաղնին պատասխանեց.—Եթէ աղուաւին իմ վրայից  
կըբերէս... Լուն թոշկոտելով աղուաւին հասաւ և ասեց.

Ագռաւ—ագռաւ կաղնուն  
թող, կաղնին ինձի կաղին  
տայ, կաղինը տամ խողիկին,  
խողիկն ինձի մազիկ տայ,  
մազից շինեմ մի պարան,  
պարանը զցեմ առուն, Մր-  
ջիւն եղբօրս աղատեմ: *Ճայլ.*

Ագռաւը պատասխանեց.—Եթէ ինձ համար հաւի ճա-  
գիկ կըբերէս... Լուն թոշկոտելով հասաւ հաւին և ասեց.

Ագռաւը պատասխանեց.—Եթէ ինձ համար հաւի ճա-  
գիկ կըբերէս... Լուն թոշկոտելով հասաւ հաւին և ասեց.



շինեմ մի պարան, պարանը զցեմ առուն, Մրջիւն եղբօրս ազատեմ:


Հաւը պատասխանեց.—Եթէ ինձ համար կուտ կը բերես... Լուն թռչկոտելով հասաւ ցորնահորի մօտ և ասեց.

ԿԱՐ. 16.



Կաղնին ինձի կաղին տայ, կաղինը տամ խոզիկին, խոզիկին ինձի մազիկ տայ, մազից շինեմ մի պարան, պարանը զցեմ առուն, Մրջիւն եղբօրս ազատեմ:


Հորը պատասխանեց.—Եթէ մուկն ինձանից կը հեռացնես... Լուն թռչկոտելով հասաւ մկանը և ասեց.



Մուկիկ, հորին մի գիպչիր, Որ հորիկն ինձ կուտիկ տայ, Կուտը տանեմ հաւին տամ, Հաւիկն ինձի ձագիկ տայ, Ձագիկը տամ ագռաւին ագռաւը քաշուի կաղնուց, կաղնին ինձի կաղին տայ, կաղինը տամ խոզիկին, խոզիկն ինձի մազիկ տայ, մազից շինեմ մի պարան, պարանը զցեմ առուն, Մրջիւն եղբօրս ազատեմ:

Մուկը պատասխանեց.—Եթէ ինձ կատւից կազատես... Լուն թռչկոտելով հասաւ կատւին և ասեց.


Հաւիկ—հաւիկ, ձագիկ տուր, ձագիկը տամ ագռաւին, ագռաւը քաշուի կաղնուց, կաղնին ինձի կաղիկին, խոզիկն ինձի մազիկ տայ, կաղինը տամ խոզիկին, խոզիկն ինձի մազիկ տայ, մազից շինեմ մի պարան, պարանը զցեմ առուն, Մրջիւն եղբօրս ազատեմ:



Կաղնուց, կաղնին ինձի կաղին տայ, կաղինը տամ խոզիկին, խոզիկն ինձի մազիկ տայ, մազից շինեմ մի պարան, պարանը զցեմ առուն, Մրջիւն եղբօրս ազատեմ:

Կատուն պատասխանեց.—Եթէ ինձ համար կաթ կը բերես... Լուն թռչկոտելով հասաւ կովին և ասեց.

Կատւիկ—կատւիկ, թող մուկին, մուկը քաշուի հորիցը, որ հորիկն ինձ կուտիկ տայ, կուտը տանեմ հաւին տամ, հաւիկն ինձի ձագիկ տայ, ձագիկը տամ ագռաւին, ագռաւը քաշուի




հաւիկն ինձի ձագիկ տայ, ձագիկը տամ ագռաւին, ագռաւը քաշուի կաղնուց, կաղնին ինձի կաղին տայ, կաղինը տամ խոզիկին, խոզիկն ինձի մազիկ տայ, մազից շինեմ մի պարան, պարանը զցեմ առուն, Մրջիւն եղբօրս ազատեմ:

Կովը պատասխանեց.—Եթէ ինձ համար խոտ կը բերես... Լուն գնաց դաշտից մի խորոմ խոտ քաղեց բերաւ կովին տըւաւ:



Կովը նրան կաթ տըւաւ, կաթը տըւաւ կատւիկին, կատուն հաշտւեց մկան հետ, մուկը հորին չըդիպաւ, հորը լըւին կուտ տըւաւ, կուտը տարաւ հաւիկին, հաւը նրան ձագ տըւաւ, ձագը տարաւ ագռաւին,

ագռաւը թողեց կաղնուն, կաղնին էլ կաղին տրւաւ, կա-  
ղինը խոզին տրւաւ, խոզիկը մի մազ տլւաւ, մազիցը  
պարան շինեց, պարանը կամուրջ գցեց, Մրջիւն եղբօրն  
անցկացրեց:



Յիշրու.

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԵՐԳ.

Գնացէք, տեսէք՝ ով է կերել այգին.

Գնացին, տեսան՝ այծն է կերել այգին:  
Այծն ու այգին.

Զեզ բարի—կենդան, մեզ բարի զատիկ:

Գնացէք, տեսէք՝ ով է կերել այծը.

Գնացին տեսան՝ գայլն է կերել այծը:  
Գայլն ու այծը, այծն ու այգին.

Զեզ բարի—կենդան, մեզ բարի զատիկ:

Գնացէք, տեսէք՝ ով է կերել գայլը.

Գնացին, տեսան՝ սուրն է կերել գայլը:  
Սուրն ու գայլը, գայլն ու այծը,

Այծն ու այգին.

Զեզ բարի—կենդան, մեզ բարի զատիկ:

Գնացէք, տեսէք՝ ով է կերել սուրը.

Գնացին, տեսան՝ ժանդն է կերել սուրը:  
Ժանդն ու սուրը, սուրն ու գայլը,

Գնացէք, տեսէք՝ ով է կերել ժանդը:

Գնացին, տեսան՝ իւղն է կերել ժանդը:  
Իւղն ու ժանդը, ժանդն ու սուրը,

Կաղն ու ժանդը, ժանդն ու սուրը,

Սուրն ու գայլը, գայլն ու այծը,  
Այծն ու այգին.

Զեզ բարի—կենդան, մեզ բարի զատիկ:  
Գնացէք, տեսէք՝ ով է կերել իւղը.

Գնացին, տեսան՝ մուկն է կերել իւղը:  
Մուկն ու իւղը, իւղն ու ժանդը,

Ժանդն ու սուրը, սուրն ու գայլը,  
Գայլն ու այծը, այծն ու այգին.

Զեզ բարի—կենդան, մեզ բարի զատիկ:  
Գնացէք, տեսէք՝ ով է կերել մուկը.

Գնացին, տեսան՝ կատուն է կերել մուկը:  
Կատուն ու մուկը, մուկն ու իւղը,

Իւղն ու ժանդը, ժանդն ու սուրը,  
Սուրն ու գայլը, գայլն ու այծը,  
Այծն ու այգին.

Զեզ բարի—կենդան մեզ բարի զատիկ:  
Գնացէք, տեսէք՝ ով է տարել կատուն.

Գնացին, տեսան՝ հարսն է տարել կատուն:  
Հարսն ու կատուն, կատուն ու մուկը,

Մուկն ու իւղը, իւղն ու ժանդը,  
Ժանդն ու սուրը, սուրն ու գայլը,  
Գայլն ու այծը, այծն ու այգին,

Զեզ բարի—կենդան, մեզ բարի զատիկ:  
Գնացէք, տեսէք՝ ով է տարել հարսը.

Գնացին, տեսան՝ փեսան է տարել հարսը:  
Փեսան ու հարսը, հարսն ու կատուն,


Կատուն ու մուկը, մուկն ու իւղը,  
Իւղն ու ժանդը, ժանդն ու սուրը,  
Սուրն ու գայլը, գայլն ու այծը,  
Այծն ու այգին.

Զեզ բարի—կենդան, մեզ բարի զատիկ:  
Գնացէք, տեսէք՝ ով է տարել փեսան.

Գնացին, տեսան՝ Տէրն է տարել փեսան:  
Տէրն ու փեսան, փեսան ու հարսը,

Հարսն ու կատուն, կատուն ու մուկը,

Մուկն ու իւղը, իւղն ու ժանգը,  
Ժանգն ու սուրը, սուրն ու գայլը,  
Գայլն ու այծը, այծն ու այզին.  
Զեղ բարի—կենդան, մեղ բարի զտոփիկ:



## 18 Փառք. ՀԱՆԵԼՈՒԿ

Օհանն ու Վանին հանելուկներ էին առաջարկում միմեանց: Հեշտ հանելուկները երկուսն էլ գտնում էին, իսկ գժւարի համար, որ չէին կարողանում գտնել, զանազան քաղաքներ էին ընծայում առաջարկողին, որ նա բանայ հանելուկը: Ահա օրինակ.

—Վանի, աբա ասա. այս ինչն է, որ դուքսն արծաթ է, մէջը սակի:

—Գիտեմ, այդ ձուն է, որ դուքսը սպիտակ է, ներսը դեղին: Հիմա ես հարցնեմ:

«Անջուր ջաղաց, անկրակ բաղարջ». այս ի՞նչն է:

—Եյդ մեղրահացն է: Դէ հիմա ես հարցնեմ:

—Եյն ինչն է ի՞նչ՝ Տակը քար է, քար չէ, վրան քար է, քար չէ, խոտ կուտի, կով չէ, ձու կածի, հաւ չէ...

—Սպասիր մտածեմ: Ինչպէս թէ «վրան քար է», այդ ես լու չեմ հասկանում:

—Ի՞նչ կայ այդտեղ չըհասկանալու: Վերև ու ներքև, կամ տակն ու գլուխը, կամ փորն ու քամակը քար է, բայց քար չէ:

—Յետոյ, համ խոտ է ուտում, համ էլ ձնւ ածում:

—Եյն, այն... էլ մի՛ երկարացնիլ, կամ թէ չէ, մի լաւ քաղաք տուր, ասեմ:

—Շատ լաւ, Երևանը քեզ:

—Երևանը շոգ է, չեմ ուզում:

—Ելէքսանդրապօլ. Նուխի. Շամախի<sup>o</sup>. Բաքու. Ղուբա:

—Չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում...

—Ապա մըն ես ուզում...

—Թիֆլիսը:

—Օհօ, ինչ ախորժակ ունիս... Թիֆլիսը չեմ տալ:

—Իմ ուզածը Թիֆլիսն է. չես տալ, ես էլ չեմ ասիլ:

—Եյդ ի՞նչ հանելուկ է, որ ես դրա համար Թիֆլիսը քեզ տամ, կարժէ արդեօք: Դէ լաւ, քեզ լինի:

—Դէ լսիր առաջ: Ուտեմ, խմեմ՝ Թիֆլիս. հագնեմ, մաշեմ՝ Թիֆլիս, ես մի քահլան ձի նստեմ, դու մի լըդրիկ ջորի, ես ուտեմ մածուն ու կաթ, սերն երեսին, խսկ դու...


—Դէ, բաւական է, ասա, եթէ ոչ՝ Թիֆլիսը յետ կը լուեմ:

—Կրիան է, կրիան: Եյն որ կանգնում ենք վրան, որ մեզ տանի պապոնց տուն, և ասում ենք, «Կօրա, կօրա, պապոնց տուն»...

—Դու էլ բան ասացիր... Պապոնցս տունը ես վագելով եմ գնում և ոչ թէ կրիայի քայլերով: Բայց ձիշտ է, որ նա քարի պէս պինդ պատեան ունի, ու համ խոտ է ուտում, համ էլ ձու է ածում: Բայց Թիֆլիսը շատ է դրա համար, դու թանգ ծախեցիր... \*



Օհանի կրիան է



*Խաղաղի*

Բ Ա Դ

ՀԵ. 16. Բաղիկ—բաղիկ, կարմիր թաթիկ,  
Ուր ես գնում կամաց—կամաց,  
Զագուկները չորս կողմդ առած.  
—Ես գնում եմ ջուր գտնելու,  
Զագուկներս լըւանալու,  
Զագուկներս մաքուր—մաքուր,  
Իսկ ծոյլ տղայքն են աղտ ու մուր:



Ս Ա Գ

Վագիկ մագիկ, իմ սիրունիկ,  
Ես քեդ կըտամ քաղցր կուտիկ,  
Որ դու ուտես, շուտ մեծանաս,  
Ուրախ ապրես զըւարձանաս.

Երբ մեծանաս, մեծ սագ դառնաս,  
Ես կըխնդրեմ իմ մայրիկիս,  
Որ նա ժողով քո փետուրներ  
Եւ ինձ համար շինէ բարձեր:

### ՄՐՏԱՅԱԿ ԱՂՋԻԿ

Այի փոքրիկ աղջկայ մայր հիւանդացել էր և բժիշկը  
մի դառը դեղ էր տըւել խմելու: Աղջկը տեսնում է, որ  
մայրը զըզւելով է խմում դեղը, ասում է.

—Մայրիկ, թող ես խմեմ քո փոխարէն:

### ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Ես աչքով տեսնում եմ, ականջով լսում, քթով հոտ  
եմ առնում, լեզով ճաշակում. իսկ ցուրտն ու տաքը,  
կոշտն ու կակուղը ինչով եմ զգում.

—Բոլոր մարմնովս եմ շօշափում:

ՈՒՅ.

### ԿԻՐ. Զ. Ա Ռ Ա Ի Օ Տ

Արեգակը դուրս է եկել պսպըղալով,  
Շողքը ներթից ներս է ընկել շողշողալով.  
Ծիաը ծառին կըչկըչում է ծըլւըլալով,  
Զորումն առուն քըչքըչում է վըշվըշալով.  
Ծոյլ տղայի քունն է տարել խորմիալով,  
Կօշիկները շունն է տարել մըոմըուալով:



ԱՂԲԱՏԱՍԼԻՐ ՇՈՒՆԸ

Շունը պահպանում էր իր տիրոջ տունը: Նա տեսաւ  
մի մուրացկան բակումը կանգնած, սկսեց վրան հաշել:

—Միրելի, ասեց աղքատը, բարի եղիր և խղճա ինձ,  
ահա երկու օր է ոչինչ չեմ կերել:

—Ես էլ նրա համար եմ հաշում, որ տանեցիք լսեն  
ձայնս և քեզ բաժին բերեն, —ասեց շունը:

—Եթէ այդպէս է, ինդրեմ ըռէխըդ դէպի տունը  
դարձնես և այնպէս հաշես, —ասեց աղքատը, որ տնապահ  
շան աղքատամիրութեանը չեր հաւատում:

ԹԻԹԵՌԸ ԵՒ ՄԱՆՈՒԿԸ

Մ Ա Ն Ո Ւ Կ

Սիրուն թիթեռ, ինձ ասա,  
Թէ ինչնվ ես գու ապրում.

Սմբողջ օրը խաղում ես,  
Ինչպէս է որ չես յոգնում:

Թ Ի Թ Ե Ռ

Սիրուն կանաչ դաշտերում  
ես ապրում եմ համարձակ,  
Շաղիկների հոտն անուշ  
իմ կերակուրս է միակ:

Բայց իմ կեանքը շատ կարճ է,  
Հաւասար է մի օրի,  
Հէնց որ անցնի ցերեկը,  
Իմ արեն էլ կը մարի:



28 ապրի օկտոբեր

ՀԵՔԻ ԱԹԱՍԼԻՐ ԵՐԵԽԵՔ

Զմեոն էր, զիշերը երկար: Գիւնազ տատը  
գլուխը բարձի վրայ զբած՝ ննջում էր: Երեխէքը  
վրայ թափւեցին, քունը փախցրին, որ իրանց  
հանար մի հէրիաթ ասի. Նա էլ սկսեց:

—Էլէլ է չի էլէլ՝ մի արտուտիկ:

Կտուցը սուր՝ մեր Սուրիկի քթի նման: Վրայը  
խուճում՝ Սրմիկի մազերի նման:

Թսերը փափլիկ, Սրփիկի կոների նման:

Ահա այսպէս սիրուն էր արտուտիկը:

—Բա ինձ նման ոչինչ շունէր, ասեց Վանին:

—Բա ինձ, ձայն տրւաւ Հոփիսիկը:

—Ինձ էլ շատեցիր, տատիկ, լաց էլաւ նա-  
ղիկը:

—Սպասեցէք, ոտասեցէք, երեխէք, զեռ չեմ  
վերջացրել, ամենքիդ էլ բաժին կըհանի, —ա-  
սեց տատիկը և շարունակեց.

—Աշիկներն այնպէս նախշուն էին, ինչպէս  
վահինի աշքերը:

—Կատարն այնպէս կարմիր էր, ինչպէս  
Հոփոփիկի թըշերը:

—Ոտներն այնպէս բարակ էին, ինչպէս Նա-  
գիկի մատները:

—Ես ոտները չեմ ուզում, զանգատւեց Նազիկը:

—Բա ի՞նչը կուզես, Նազիկ: Եթէ «տոտիկ-  
ներ» ասեմ, կուզես, —ասում է տատիկը:

—Զեմ ուզում, ոչ ոտներ կուզեմ, ոչ տոտիկ-  
ներ, ես աշիկներն եմ ուզում:

—Աշիկներն ինձ է տըւել տատիկը, բեզ չեմ  
տալ, զոչեց Վանին:

—Նազիկ, կուզես, կատարը՝ դու վեր առ,  
տոտիկները ես կլպեցնեմ, ասեց Հոփոփիկը:

—Զեմ ուզում, ես աշիկներն եմ ուզում,  
պնդեց Նազիկը:

—Վանի, դու կատարը վերցրու, ես տոտիկ-  
ները, իսկ Նազիկը՝ աշիկները, ինդրեց Հոփո-  
փիկը. որ ամեն կերպ աշխատում էր հաշտո-  
թին ձգել:

—Ի՞նչ եմ անում կատարը, տատիկն ում  
ինչ որ տըւել է, այն է նրանը, պնդեց Վանին:

—Ճշմարիտ է ասում Վանին, ամեն կողմից  
զոչեցին երեխէրը:

Նազիկը գոհ շըմնաց և վէճը երկար շարու-  
նակւեց, բայց տատիկը չէր լսում, նա գլուխը  
դրել էր բարձին և քնել, էլ չէին կարող զնու-  
թեցնել, վեր կացան իրանք էլ մտան տեղները:

Միւս երեկոյին երեխէրը էլի հաւաքւեցին  
տատիկի մօտ, որ լսեն հէքիաթի շարունակու-  
թիւնը: Նա էլ սկսեց.

—Անցած զարնանը մեր պարտիզի ծառի  
վրայ մի սիրուն կըկու կար: Ես նստած էի ծա-  
ռի տակին, և զուք մէկ-մէկ եկաք ինձ մօտ:

Երբ որ Սուրբիկը ներս մտաւ, կըկուն կան-  
չեց.—Կո՛ւ-կո՛ւ:

Եկաւ Արմիկը, կանչեց.—Կո՛ւ-պո՛ւ:  
Եկաւ Արփիկը, կանչեց.—Տո՛ւ-տո՛ւ:  
Եկաւ Հոփոփիկը, կանչեց.—Գո՛ւ-գո՛ւ:  
Եկաւ Վանին, ասեց.—Բո՛ւ-բո՛ւ:  
Եկաւ Նազիկը, կըկուն էլ ոչինչ շասեց, թը-  
ռա՛ւ, գնաց:

—Օ՛խ, օ՛խ, Նազիկ, օ՛խ, օ՛խ, կըկուն քեզ  
համար ոչինչ չի ասել... միաբերան զոչեցին  
երեխէրը և ջըգրեցըին Նազիկին:

Նազիկը շատ նեղացաւ, թէ ինչու կըկուն  
նրա համար ոչինչ չի ասել և սկսեց լաց լինիւ:

Տատիկն ասեց.—Նազիկ, զիտես ինչու կը-  
կուն քեզ համար բան շասեց. Նա վախեց քեզա-  
նից: Ինչ որ ասէր, դու շպիտի հաւանէիր, ու-  
րիշն էլ իրանը քեզ չէր տալ, ինչպէս անցած  
երեկոյին:

— Տատիկ ջան, տատիկ, որ մէկ էլ կըկոն  
զայ, առա՝ ինձ համար էլ մի բան ասի, ինչ  
էլ որ ասի, ես կընդունեմ, — աղաչեց նազիկը և  
այնուհետև շատ խելօքացաւ:



Պ Ա Ա Կ Ն Ե Ր

Վ Ա Ր Դ

Վարդ ծաղկին լինինք նման  
եւ օրինակ հեզութեան,  
Թող վարդը հանգոտանայ  
Մեր մատաղ սրտի վրայ:

Կ Ա Դ Ն Ո Ւ Ո Ս

Կանաչ խոտը դաշտերի  
Մեր սրտին է սիրելի.  
Թող ոստը կաղնի ծառին  
Պսակ լինի մեր դլխին:

Մ Ա Ն Ո Ւ Շ Ա Կ

Ազնիւ, սիրուն մանուշակ,  
Համեստութեան օրինակ,  
Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,  
Քո քնքոյշ հոտն անուշիկ:

Կանաչ կարմիր պսակին  
Թող միանանք միասին,  
Եւ յոյսերըս յաւիտեան  
Մեզնից լինի անբաժան:



ՈՒՂԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Լինում է չի լինում մի այծ: Այս այծը ան-  
տառումը մի տնակ է շինում և իր փոքրիկ ուլերի  
հետ ընակում նրանում: Ամեն առաւօտ այծը  
դուրս է գնում արածելու, և զնալուց առաջ  
ասում էր ուլիկներին.

— Որդիք, զուռը պինդ ֆակեցէք, հանգիստ  
կացէք, և գրսից ով որ գալու լինի, զուռը բաց  
չանէք: Իսկ դաշտից վերադառնալիս պողերով  
բախում էր տնակի զուռը և ասում.

Չալիկ-մալիկ ուլիկներ,  
Չալպըտուրիկ այծիկներ,  
Ելէք զուռը բաց արէք,  
Բերաններդդ թաց արէք,  
Ես ձեզ համար կուրծքս լի  
Կաթ եմ բերել իւղալի:

ԳՐՈՒԹԻՒՆ

## ԿՈՐԱԾ ՀՈՐԹԸ

Զին էր գալիս փաթիլ-փաթիլ,  
Հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ  
Այդ միջոցին մի պառաւ կին  
Հորթ էր պարում դաշտի միջին:

Կովը եկաւ տաւարիցը,  
Կուրծք ու ծըծեր կաթով լիքը,  
«Հորթուկս ուր է», նա բառանչեց,  
Խեղճ պառաւին լացացըրեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով  
Ողբում էին լաց ու կոծով,  
Յանկարծ լաւց մի բարակ ձայն,  
Կովի խմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառանչելով,  
Խոկ պառաւը՝ արնիքտընքալով,  
Կորած հորթը մօրը գտաւ,  
Լիք ծըծերը բերանն ադաւ:

Ծըծեց բոլոր կաթն ու տկզեց,  
Տանտիկնոջը բան չըթողեց,  
Բայց պառաւը այս անգամին  
Սիրով ներեց շար հորթուկին



Ուկերը բաց են անում զուռը, մայրը ծիծ է  
տալիս նրանց կրկին զնում արածելու:

Այս ամենը տեսնում ու լսում է զայլը: Նա  
մտքումը զնում է, որ ուկերին խաքելով՝ ներս  
մտնի նրանց տնակը: Մի օր, երբ մայրը դուրսն  
է լինում, զայլը զալիս է կամաց-կամաց, թա-  
թով զարկում է դռանը և ասում.

Չալիկ մալիկ ուլիներ,  
Չալպատուրիկ այծիկներ,  
Ելեք դուռը բաց արեք,  
Բերաններդդ թաց արեք,  
Ես ձեզ համար կուրծքս լի  
Կաթ եմ բերել իւղալի:

20.

Ուկերը մի լաւ ականջ են զնում և հասկա-  
նում են, որ զուռը բախովը իրանց մայրը չէ,  
և պատասխանում են. — Դու մեր մայրը չես. մեր  
մօր այնը քաղցր է ու բարակ, իսկ բո ձայնը  
հաստ է ու խռպոտ. մեր մայրը դռավը պողերովն  
է բախում, իսկ դռ շանգրաւում ես ճանկերովը:  
Մի քիչ սպասիր, ահա մեր մայրը կլպայ, քաջ  
Բօղարն էլ հետը:

Բօղար շան անունը որ լսում է զայլը, իս-  
կոյն հեռանում է սուս ու փուս:

Ուկերի մայրը զալիս է, զովում է ուլիկնե-  
րին և ասում. «Դուք լաւ եք արել, որդիք, որ  
դուռը բաց չեք արել, եթէ ոչ՝ նա ձեզ ամենքիդ  
էլ կուտէր»:

3. ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԻ

<sup>1</sup>Կառեմ

Անտառի խորքում մի ճօճ կար կապած և նրա մէջ  
մի մանուկ դրած։ Լաց էր լինում մանուկը։ Մայր չըկար  
մօտը, որ ծիծ տար, հայր չըկար, որ պահպանէր։ Անտառ-  
ուումը մարդ չըկար։ *ուսուց*

Մի գթոստ պախրակով՝ կաթնալից կրծքով՝ եկաւ  
ճօճի մօտ իր հորթուկի հետ և տխուր ձայնով երեխին  
ասէց.

Սիրուն երեխայ, որք ես մնացել,  
Քո անբախտ մօրը գերի են տարել. *ուսուց*  
Նա գնաց, կորաւ, էլ յետ չի գալու,  
Էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու։  
Նա քեզ փաթաթեց լայն տերևներով,  
Ճօճի մէջ կապեց, «նանիկ» ասելով.  
Նա լաց էր լինում աղի արցունքով, *ուսուց*  
Իր վերջին նանիկն ասում էր լալով.

«Մեծատերև թաթաշոր,  
«Մանրատերև ոտաշոր,  
«Քամին կանի՛ ժաժ կըտայ,  
«Պախրէն կըգայ՛ ծիծ կըտայ»...

Անա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,  
Պահեմ պահպանեմ իմ հորթուկիս պէս։

2

106. Պախրան ծիծ տըւաւ երեխին, երեխան կշտացաւ  
ու քնեց։ Պախրան իր հորթին թողեց երեխի մօտ, իսկ  
ինքը գնաց մօտերքում արածելու, որ կաթը շատացնի,  
և գայ երկուսին էլ ծիծ տայ։ Հորթը մնաց երեխի մօտ,  
օրօրեց նրան և նանիկ ասեց։ —  
Նանիկ արա, նանիկ, նանիկ.  
Նանիկ արա, սիրուն մանիկ։

Անա կըգայ իմ մայրիկը,  
Կուրծք ու ծըծեր կաթով լիքը.  
Ամեն գետնին նա չի նստում,  
Ամեն խոտից չի արածում,  
Նա չի խմում ամեն ջրից,  
Աղ չի լիզում ամեն հողից.  
Նա սարէսար ման է գալիս,  
Որբ է գտնում ծիծ է տալիս.  
Որտեղ որ է, ահա կըգայ,  
Ինձ էլ, քեզ էլ կուշտ ծիծ կըտայ.  
Նանիկ արա, նանիկ, նանիկ,  
Նանիկ արա, սիրուն բալիկ...

Պախրան կուրծը լիքը յետ դարձաւ արօտատեղից և  
ծիծ տըւաւ երեխին էլ, հորթին էլ։  
Ով որ տարով կըմեծանայ, մեր երեխան օրով մե-  
ծացաւ։ Շատ չանցաւ նա դուրս եկաւ ճօճիցը, մէկ օր  
չորեքթաթ տըւաւ, միւս օրը ոտքի կանգնեց, մի քանի  
անգամ սահեց, վայր ընկաւ, բայց շուտով ամրացաւ և  
սկսեց պախրի հետեւից վազվըղել։ *X 25*

Տարր 24

3

Մի թագաւոր որդի շունէր. երազումն ասացին. «Թա-  
գաւոր, Յստւած քեզ մի որդի պիտի տայ անտառի խոր-  
քումը»:

Մէկ անգամ այս անգաւակ թագաւորը որսի գնաց իր  
որսորդների հետ։ Շատ ման եկան, ոչինչ չըգտան, բայց  
որ հասան անտառի խորքը, այնտեղ մի պախրի հետք  
գտան և նրա մօտ մի երեխի ոտնատեղեր։

Ամենքը մնացին զարմացած և չէին հաւատում որ  
երեխի կըլինի ոտնատեղերը. բայց թագաւորն իսկոյն  
յիշեց իր երազը և հրամայեց որսորդներին, որ երեխի  
հետքը քշեն և ուր որ լինի՝ գտնեն նրան։

Որսորդները գնացին և երկու ժամ չանցած, մի սի-  
րուն տղայ բերին թագաւորի մօտ և պատմեցին, թէ  
ինչպէս գտան նրան պախրի ծիծը ծըծելիս։

Թագաւորը շատ շվրախացաւ, երեխին գրկեց, համ-  
բուրեց և անունը դրաւ Պախրատուր: Պախրատուրը մե-  
ծացաւ թագաւորի պալատումը, յաւ ուսում առաւ, վերջը  
դառաւ թագաւոր և մեծ զօրքով գնաց իր մօրն ազատեց  
գերութիւնից:

### ՈՐԲԻ ՊԱՀՈՂՆ ԱՍՏԻԱԾ է

Փայլուն արկը արդէն մայր մտաւ,  
Լուսինն էլ վաղուց գնաց թաք կացաւ,  
Գիշերւայ մութը աշխարհու պատեց  
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:

Ամեն մարդ քաշւեց իր առւնը մտաւ,  
Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ,  
Միայն խեճ որբը, որ չունէր հայր, մայր,  
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,  
Ռաքերը բորբիկ, տկլոր ու քաղցած,  
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած:

Բարի տան-տէրը, վերեկից նայեց,  
Մեր թշւառ որբին ներս հրաւիրեց,  
Եւ այնուհետև տարաքախտ տղան  
Ունէր իր համար տէր ու տիրական:



### ԳԻՒԼՆԱՐ ՏԱՏԻ ԹՈՌՆԵՐԸ

Մէկ անգամ Գիւլնար տատին շըշապատեցին իր  
թոռները և ստիպեցին, որ տատը թոշնիկներ շինէ  
նրանց:

Տատն էլ վեր առաւ փոքրիկներից մէկին, դրաւ  
ծնկան վրայ, երկու ձեռքերից բռնեց և վեր ու վայր  
թափ տալով երգեց.

Ղու—ղու—ղու, ա—ղու—ղու.

Նակ, նակ, ա—ղու—նակ, թը՛ռռռ...

Յետոյ մի ուրիշն ընկաւ տատիկի գիրկը և ասեց.

—Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի կաչաղակ շինես...

Տատիկը նրան էլ դրաւ ծընկներին և առաջւան պէս  
երգեց.

Զա—չա—չա, կա—չա—չա,

Ղակ, ղա՛կ, կա—չա—ղա՛կ, թը՛ռռռ...

—Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի ծիտիկ շինես,  
ասեց ամենից փոքրիկը:

Տատիկը նրան էլ վեր առաւ և վեր ու վայր թը՛ռ-  
ցնելով՝ երգեց.

Ծիտ եմ, ծիտ եմ, ծլըւլում եմ,

Ծիւ, ծիւ, ծիւ.

Ոստոստում եմ, թոչկոտում եմ,

Ծիւ, տիւ, տիւ.

Նրի, թիկ, արի, վեթրիկ,

Որ ես դառնամ փոքրիկ ծիտիկ,

Փոքրիկ ծիտիկ, պիծիկ - միծիկ, թը՛ռռռ...





## ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ

ՊԱՌԱՒԻԼ

Ճնւ--ճնւ--ճնւ--ճնւ, իմ վառիկներ,  
Սիրուն ճուտեր, հաւ մարիկներ,  
Ռսկեփետուր աքլարիկներ,  
Եկէք կերէք ձեր հատիկներ:

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Զար փիսիկը մօտ է գալիս,  
Սև ձագին է մտիկ տալիս,  
Թաթը մեկնեց, վզից բռնեց,  
Աքաղաղներ, հաւ մարիկներ,  
Պահպանեցէք ձեր ճուտիկներ:

ԱՐԱԴԱՐԱՆԵՐ

Հասէք, հասէք, օդնեցէք,  
Զար փիսիկին պատժեցէք:

ՀԱԻԵՐ

Ժողովւենք, միանանք,  
Զար փիսիկին վրայ տանք:

ԲՈԼՈՐԸ

Տեսա՞ք, տեսա՞ք ինչ եղաւ,  
Գող կատուն որ մեզ տեսաւ,  
Խիստ վախեցաւ ու փախաւ.  
Որեմն ապրենք միասին,  
Որ մօտ չըգայ թշնամին:



ՀԱԻ

Ինչու աքլարը կանգնած է բակում, պինդ-պինդ կան-  
չում է իր կուկուրիկուն. — Ենդուր որ վաղուց արևն է  
ծագել, բայց ծոյլ երեխան քնից չի զարթել: Դեռ չի  
վեր կացել, աղօթքն արեւ դպրոցի դասը դեռ չի սովո-  
րել: Կանչում է աքլարն իր կուկուրիկուն, տղայոց պարտ-  
քը միտներն է ձգում:

Հարսի հաշիւլ

Երկուշաբթի հաց կըթխեմ, երեքշաբթի լոշ կըթըր-  
ջեմ, չորեքշաբթի լըւացք կանեմ, հինգշաբթի կար կը-  
կարեմ, ուրբաթ օրը պաս կըկենամ, շաբաթ օրը ժամ  
կըգնամ, լոյս կիրակի փուանց-փուանց՝ կըզարդարւիմ,  
կերթամ հօրանց:

ՉՈՐՍ Եղանակ

Մարտը տալիս է ձնծաղիկ,  
Ապրիլը կապոյտ մանուշակ,  
Մայիսին բացւում է վարդը,  
Սուսակը երգում անուշակ:  
Յունիսը մեզ խոտ է տալիս,  
Իսկ յուլիսը առատ ցորեն,  
Օգոստոսը տանձ ու ինձոր,  
Եւ ուրիշ շատ հասուն մրգեր:  
Սեպտեմբերը մեզ տալիս է  
Խաղողի բոլոր տեսակը,  
Հոկտեմբերը կարմիր գինին,  
Նոյեմբերը բողին ու տակը:  
Դեկտեմբերին ձիւն է գալիս,  
Յունւարին ծածկում սար ու ձոր  
Փետրւարին սկսում է  
Փոփոխակի ցուրտ ու տաք օր:

Ահա այսպէս բոլոր տարին  
Թաւալւում է չորս շրջանում։  
Եյս պատճառով չորս ժամանակ,  
Չորս եղանակէ մեզ բերում։

### Տարւայ ամիսները

Յունիսը, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս,  
յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր,  
դեկտեմբեր։

### Գ դ ա լ - փ ո խ

Ամառն էր։ Հունձն ընկել էր։ Մէկ լուեցի և մէկ աշ-  
տարակցի միասին հունձ էին անում։ Ճաշի ժամանակ  
նրանց համար մածուն բերին մի մեծ մաթրաթով, բայց  
երկու գդալի տեղ մէկն էին բերել։

Երբոր մածնի բրթուճը պատրաստեցին, աշտարակ-  
ցին ասեց։

— Գդալը մէկ հատ է. արի գդալ-փոխ անննք, գդալ-  
փոխ ուտենք։

Լուեցին չընամաձայնեց, ասեց։

— Թող ես գդալով ուտեմ, զու ձեռով կեր։

— Ոչ, պատասխանեց աշտարակցին։ Որովհետեւ գը-  
դալ-փոխ չես ուզում, արի մէկ բան ասեմ, այնպէս ա-  
նենք։ Ով որ մեզանից եօթը գիւղի անուն տայ վրա  
վրա, շուտ-շուտ, գդալով նա ուտի։

— Լաւ. առաջ ես կասեմ. ասեց լուեցին ու սկսեց։

— Հէ, լօ...ոի, հլէ, Ու...զմւն...լա՛ր...։

Լուեցին միայն երկու գիւղի անուն տըւաւ, այն էլ

չըկարողացաւ շուտ-շուտ ասել ու սուս կացաւ. յետոյ աշ-  
տարակցին սկսեց, և կարկուտի պէս վրա տըւաւ.

Ուշի-Ուշական

Փարպի-Բիրական

Թալին-Թալիշ-Մաստարա

Գդալի պոչը դէմն արա

Ասեց ու գդալն առուտ լուեցու ձեռքիցը։ Լուեցու  
բերանը մնաց բաց. բայց էլ ինչ կարող էր անել. խաղը  
տանուլ էր տըւել..

### Արհեստ ընտրող մանուկը

Թորոսի որդին մի ծոյլ տղայ էր, ոչ գիր էր, սով-  
րում և ոչ մի արհեստ։

— Ի՞նչ արհեստ սովորեմ. — Քընթֆընթում էր նա. կեկ-  
չութիւնը շատ լաւ արհեստ է, բայց բորիկ ոտքով, ամա-  
նում կանգնել, արագ պտղտել, դա այնքան հեշտ չէ։  
Աւելի հեշտ է փուքսի փշելը, բայց այդ իմ ձեռքում եր-  
կար չեն թողնիլ. Վարպետ էլ գտննամ, ինչ եմ անելու,  
պէտք է մատներով փոքր ինչ բամբակով տաք-տաք պղն-  
ձին նաշագիր քսեմ, ձեռքերս այրեմ։ Զէ, այդ իմ բան չէ։

— Դարբնի մօտ կերթամ, այնաեղ էլ փուքս կայ,  
ձմեռն էլ տաք է, բայց մեծ ուժ պէտք է այդ գործի  
համար. ահազին մուրճով երկաթը ծեծել, որ նա տա-  
փակի, — ես այդ չեմ անիլ, ինչ կուզի լինի։

— Նալբանդը լաւ է։ Մեխի ծայր որել և պայտեր  
շտկել. այդ շատ դժւար չէ. բայց մէկ ամենի ձիու ոտք  
բռնել, ծնկանը գնել-երկիւղալի է. ձիու աքացին իմ  
ընկերների ապտակից թունդ է։ Զէ, իմ կարծիքով դա  
լաւ արհեստ չէ։

Դերձակութիւնը մաքուր արհեստ է, լաւ միտս ըն-  
կաւ, բայց ինչ եմ ասում. ամբողջ օրերով ծալպատիկ  
նստել, զլուխ քաշ գցած կարել ու կարել, ոչ խաղալ  
կընի և ոչ վազվազել։ Զէ, դա էլ բան չէ։

— Ի՞նչու չըգնամ որմնադիր դառնամ, բարձր պատերի ծայրերին կանգնեմ, այստեղից կանչեմ. — «քար ու կիր տըւէք, աղիւս ձգեցէք»: Այսպէս կըգոռամ և կըհրամայեմ, որ աշխարհք տեսնի, թէ ես վարպետ եմ, գործուաւ գիտեմ: Բայց վայ թէ յանկարծ այդ բարձր տեղից ոտքս սլվճի և թրմիալով ներքև դլորւիմ: Զէ, այդ հեշտ գործ չէ և ոչ իմ բանն է:

Երկի չըկայ այնպիսի արհեստ որ ես հաւանեմ, գընամ սովորեմ: Թէ հիւսն դառնամ, ոտքս կըկտրեմ. կօշկակար դառնամ, ձեռքն կըծակեմ. ոսկերիչ դառնամ, մատներս կայրեմ. թէ բըուտ դառնամ, ցեխ պիտի կոխ տամ. վարժարան գնամ, գիր պիտի սովորեմ: Զէ, իմ կարծիքով ամենից լաւ է՝ ոչինչ չըշննեմ, ոչինչ չըսովրեմ: Բայց այնուհետև ես ի՞նչ կըդառնամ:

### ԾԱԼ աղջիկ

Բանն ի՞նչ կանեմ, կեղտոտ է,  
Բամբակը կորիզոտ է.  
Մետաքս պիտի որ մանեմ,  
Մաստակ պիտի որ ծամեմ,  
Կտերը տիտիկ<sup>\*)</sup> անեմ,  
Անցնողին մտիկ անեմ.  
Ուտեմ, խմեմ,  
Մթնի, քնեմ:

### Առածներ

Իմացողին մին, չիմացողին հազար ու մին: — Իմացողին մէկ ասա, չիմացողին հա կաց, հա ա՛սա: — Սևին սապոնն ինչ անի, խնին խրատն ինչ անի: — Ով որ երդի ապուն ինչ անի, խնին խրատն ինչ անի: — Ով որ երդի ապուր, նա պար կըգայ ձմեռը: — Մի բաժակ ջուր, ով ու-

ղի՝ տուր: — Եսօրւայ փուշը, էգուցւայ նուշը: — Հացն ուտելով, բանն անելով: — Եպրել կայ՝ երկաթ է, ապրել կայ՝ արծաթ է: — Զըփ գողը ձիու գող կըդառնայ: — Տաշածքարը գետնին չի մնալ: — Ծերանաս, ծերի պատիւն իմանաս: — Կուշտը քաղցածին մանր կըբըթի:

### Պառաւն ու այծը

Կար չըկար երբեմըն  
Մի աղքատ պառւիկ,  
Ունէր մեր պառաւը  
Կաթնատու այծիկ.

Չալիկ մալիկ,  
Կաթնատու այծիկ:

Պառաւը ձմեռը  
Այծիկը պահեց,  
Իր բերնի պատառը  
Նըրա հետ կիսեց.

Սիրով յօժառ  
Նըրա հետ կիսեց:  
Երբ որ ձիւնը հալւեց,  
Բըսաւ կանաչ խոտ,  
Պառաւն իր այծիկը  
Դուրս տարաւ արօտ.

Ուրախ—գրւարթ,  
Դուրս տարաւ արօտ:

Թանձր մատախուղը գետինը պատեց.  
Պառաւի առջիկը այծը կորցրեց:  
Ափսո՞ս, ափսո՞ս,  
Այծը կորցրեց:

<sup>\*)</sup> Կտերը տիտիկ անել=տանիքին=կտրին նստել:

Պառաւը լաց էլաւ, իսկ գայլը օռնաց,  
Մոլորւած այծիկը բարձր մըկըկաց.

Մըկը՝ կ, մըկը՝ կ,

Այծը մըկըկաց:

Գայլն իսկոյն մօտեցաւ, այծին շալակեց.

Պառաւը հետեկից բարձրաձայն գոչեց.


«Հայ-հայ՝ յ, վայ-վայ՝ յ»,

Բարձրաձայն գոչեց:

Խեղճը մնաց կանգնած, մի փունջ խոստ ձեռին,  
Անոթիթար ձայնով կանչելով այծին.

«Եկ, — Եկ, — Եկ, — Եկ»,

Կանչելով այծին:



### Ծառերի գանգառը

Մեր տըւած փայտից կրակ են անում, տուն տաքաց-  
նում, թոնիրը վառում, կերակուր եփում, փափուկ հաց  
թխում, ուտում կշամում, բայց մեզ չեն յիշում, մեզ  
չեն պահպանում. այլ անգութ կերպով մեզ կոտորում  
են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից շինում են տներ, գոմեր, մարագ-  
ներ, ժամեր ու վանքեր. մեր տախտակներից յատակ,  
առաստաղ, աթոռ, պահարան, սեղան, նստարան, դուռ  
ու պատուհան, և այլ շատ տեսակ կահ ու կարասիք:  
Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ  
կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից ու տախտակներից կամուրջ են շի-  
նում՝ գիտերով անցնում. սայեր են շինում, ամեն ինչ  
կրում. գութան են շինում՝ հողերը հերկում. լուծ, սա-  
մի շինում՝ եզ, գոմէշ լծում. օրօրոց շինում՝ մանկիկ օ-  
րօրում. նաւեր են շինում, ծովի մէջ լողում։ Բայց մեզ  
չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով  
մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում։

Ո՞վ չի տանձ կերել կամ կարմիր խնձոր. նուռ ու  
սերկեիլ, կեռաս ու սալոր. գեղձ կարմրաթուշիկ, ծիրան  
անուշիկ։ Հապա խաղողը... և քանի տեսակ. կանաչ ու  
կարմիր, թուխ-թուխ ու սպիտակ, և այդ ամենը մար-  
դիկն են ուտում։ Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահ-  
պանում։

Խելօք մանուկներ, գուք որ մեծանաք, մեզ խնայե-  
ցէք, մեզ պահպանեցէք և ձեր հանդերում, ձեր պարտէզ-  
ներում ծառեր տնկեցէք։

### Ծիծեռնակ

Խեղճ ծիծեռնակը ամբողջ ցերեկը չի հանգստանում,  
այլ միշտ թոչելով, դէս դէն ընկնելով՝ նիւթ է հաւաքում,

Նիւթ է հաւաքում խոտ ու կաւ կրում, իր բունը չի-  
նում, բմբուլով լցնում, լաւ փափկացնում ու մէջը մտնում։

Մտնում է մէջը, երեք ձու ածում և երեք շաբաթ  
վրան թուխս նստում, ձագուկներ հանում։

Փափլիկ ձագերը գուրս եկան թէ չէ, մայրը թըռ-  
չում է, դէս ու դէն ընկնում, մժեղներ բերում, նրանց  
կերակրում։

Մի քիչ ժամանակ որ անց է կենում, սիրուն ձագե-  
րը թեսարում են, բնից գուրս թոչում և իրանց մօր  
հետ ճանապարհ ընկնում, լայն-լայն դաշտերի, խոր-խոր  
ձորերի, մութ անտաների, բարձր սարերի, կապոյտ ծո-  
վերի վրայից անցնում, հեռու տեղ գնում։

Չմեռն անցնում է, գարունը մտնում, մեր ծիծեռ-

նակը էլի գալիս է, իր բունը գտնում, ճշում, ծըլւըլում,  
քանդւածը շտկում, կարկտում, շինում, նոր ձեր ածում,  
նոր ձագեր հանում, պահում մեծացնում, աշնան ժամա-  
նակ առաջւայ նման, ճանապարհ ընկնում, — լայն-լայն  
դաշտերի, խոր-խոր ձորերի, մութ անտառների, բարձր  
սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու տեղ  
գնում:



## Մեղուն ու մարդը

Մեղուն մէկ անգամ հարցրեց իր աիրոջը.

— Քո կենդանիներից ո՞րն է ամենից օգտակարը:

— Գիտեմ, զու երկի կարծում ես, թէ ամենից օգ-  
տակարը դու ես, բայց սխալում ես, պատասխանեց տէրը:  
Ի՞նչպէս, տէր, ո՞րն է այն կենդանին, որ ինձանից  
աւելի օգտակար է:

— Ռչխարը:

— Եյդ հաշիւ չէ, տէր. ռչխարը իմ հասակակիցս չէ:  
Նա մի ահապին կոնդանի է, իսկ ես մէ միջատ եմ: Դու  
պէտք է ինձ իմ ընկերների հետ համեմատես:

— Շատ բարի. շերամը քեզ պէս փոքր է, բայց քե-  
զանից շատ օգուտ է տալիս:

— Շերամը ո՞րն է:

— Շերամն այն իմաստուն որդն է, որ մեզ համար  
աննման քնքոյշ մետաքս է շինում:

— Հա՞՛, իմացայ. այդ այն շատակեր ճիճուն չէ, որին  
անդադար կերակը տէր թթան տերևներով:

— Նա ինքն է:

— Բայց գիտե՞ս, տէր, նրա չափ որ մեզ էլ կերակէք,

մենք մեղրի տեղ ոսկի կըշինենք ձեզ համար: Դուք ոչ  
մի կենդանի չունիք, որ իր կերակուրը մեզ նման ինքը  
լինի շինելիս և ուրիշներին էլ բաժին լինի առլիս: Են-  
պէս չէ, պարոնս:

— Այո, այդ կողմանէ դու ուղիղ ես. մենք դէպի ձեզ  
շատ ապերախտ ենք, որովհետեւ բոլորովին անխնամ ենք  
թողնում ձեզ...

Մեղուն ուրախացաւ տիրոջ պատասխանիցը և թուաւ  
նստեց վարդենու վրայ:

## Մ ե ղ ու

Հա ծագեցաւ արեգակը,

Հա ծաղկեցաւ մանուշակը.

Մեղուն թողեց իր փեթակը

Տըղտըղալով, տըղալով:

Մեղուն թուաւ ծաղկէ ծաղիկ,

Մեղրը առաւ քաղցր անուշիկ,

Մոմը տարաւ հոտոտ լուսիկ,

Պըղպըղալով պըղպըղալով:

Ենուշ մեղրը մանր տըղոց,

Գեղին մոմը՝ ամեն սըրոց,

Իսկ չարերին կըճ ու խայթոց,

Կըսկըծալով, կըսկըծալով:

## Կենդանիների վէճը

Եզը, կովը և շունը վիճում էին միմեանց հետ և ա-  
մեն մինը պնդում էր, թէ մեր տէրը ամենից շատ ինձ է  
սիրում:

— Ի հարկէ, նա ինձ ամենքիցդ շատ է սիրում, ա-  
սում է Եզը, և գիտէք ինչու համար: Նրա համար, որ ես  
եմ նրա արօն ու տափանը քաշում, ես եմ նրա համար  
անտառից փայտ բերում: Նա ինձ է լծում սայլում և իր  
ցորենը տանում ջաղաց, այստեղ ալիւր շինում: յետոյ

էլի ես եմ տանում քաղը, ուր նա ծախում է այդ ալեւը և իր տան համար առուտուր անում, երեխանց համար հագնելիք առնում: Ուրեմն, դուք ի՞նչ էք կարծում, ես որ չըլինէի, նա ի՞նչպէս կարող էք ապրել:

—Այդ ճշմարիտ ես ասում, ասաց Կովը: Բայց մեր տէրն ինձ ամենքիցդ աւելի որ սիրում է, այդ նրա համար է, որ նա իմանում է, թէ քեզ նման աշխատասէր ու ժրաջան եզնուկին ես եմ պահել մեծացրել:

Այս մէկ: Ի՞էկ էլ որ՝ նրա գերդաստանը իմ կաթնովս եմ պահում, Այն մածունն ու կարագը, այն սէրն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թանէսպասը, որ ամեն օր խըպշում են, ում տըւածն է: Տեսնում էք ուրեմն, որ եթէ ես չըլինիմ, բոլորը քաղցած կըկոտորւին:

—Դու էլ ես ճշմարիտ ասում, սիրուն Կովիկ, սկսեց Շունը: Ո՞վ կարող է ուրանալ քո լաւութիւնը: Շատ անգամ ես ինքս էլ եմ մասնակից լինում քո տըւած անուշ թանին: Մեր տանտիկինն ամեն ինոցի հարելիս թանիցն ինձ բաժին է տալիս: Ով որ քո լաւութիւնն ուրանայ, երկու աչքով կուրանայ: Ես շատ երախտագէտ եմ, ոչ ոքի լաւութիւն չեմ կարող ուրանալ: Բայց գիտէք ինչ կայ: Դուք մի նեղանաք, որ մեր տէրն ինձ ամենքիցդ էլ շատ է սիրում: Դրա համար մեծ պատճառ կայ և ահա ասեմ, թէ ի՞նչ է դրա պատճառը...

Եւ շունն սկսեց մէկ-մէկ հաշել, թէ ինքն ինչ ու ինչ է անում:

Ասած է՝ շունը որ հաչել սկսի, էլ չի դադարիլ: Այնքան հաչեց եզան ու Կովի հետ, որ Տէրն իմացաւ, գնաց նրանց մօտ, շան լեզւիցն ազատեց, ասելով. «Թող տուր դրանց, Բնդղար, դու չըգիտես, որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք մէկդ միւսի արածը չէք կարող անել. այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցէք միմեանց»:

## Մեղուն ու աղաւնին

### 1. Փորձանք

Ժրաջան Մեղուն ծաղկալից դաշտում իր մեղրի համար նիւթ էր հաւաքում: Արևի տակին շատ աշխատելով, Մեղուն շատ յոգնեց և խիստ ծարաւեց:

Նրանից մօտիկ մի փոքրիկ լիճ կար: Մօտեցաւ լճին, մեր եկաւ ափին, որ քիչ ջուր խմի, ծարաւը կոտրի, նոր ուժ սահնայ, թոշի տուն գնայ: Հէնց որ կոտցաւ, որ ջուր կում անի, յանկարծ գլորւեց, ընկաւ ջրի մէջ: Նա շատ աշխատեց, որ ցամաք դուրս գայ, բայց մի փոքր ալիք նըրան ներս քաշեց, ափից հեռացրեց:

Այսպէս խեղճ Մեղուն ցամաքից զրկւեց, ջրի երեսին թերեր փուեց և յոյսը կտրած՝ մնաց մեկնըւած:

### 2. Օգնութիւն

Որանեղից որտեղ՝ օգնութեան հասաւ մի շատ բարեսիրտ սիրուն Աղաւնի: Բարի Աղաւնին մօտեցաւ լճին և նայեց աեսաւ մեր խեղճուկ Մեղուն՝ յուսահատ փուած ջրի երեսին: Իսկոյն շտապեց, մի տերե կտրեց և տարաւ Մեղունի առջեր ձգեց:

Մեղուն բարձրացաւ տերեկի վրայ, խելքը ժողովեց, դէս ու դէն նայեց, որ տեսնի ով էր իր ազատողը, մահից փրկողը: Եւ տեսաւ իր մօտ բարի Աղաւնուն: Շատ նայեց վրան և ուզեց խօսել, Աղաւնուն գովել, շնորհակալ լինել: Բայց մեր բարեսիրտ սիրուն Աղաւնին շատ լաւ իմացաւ Մեղունի միտքը, և ոչինչ չուզեց լսել նրանց, այլ թուաւ գնաց, որ ուրիշ տեղ էլ նոյն բարիքն անէ:

### 3. Երախտագիտութիւն

Մի օր մեր Մեղուն նոյն գաշտի միջին մի սիրուն ծաղկից նիւթ էր ժողովում և տղտղալով Աղաւնուն գո-

վում: Մեղըւի հանդէպ, մի ծառի վրայ նստած ննջում էր  
ծանօթ Աղաւնին:

Հէնց այդ ժամանակ Մեղուն նկատեց, որ ահա մէկ  
մարդ, հրացանը ձեռին, մէջքը կուացրած, չար օձի նման  
սողում է սուս-փուս գէպի Աղաւնին: Մեղուն հասկացաւ,  
որ դա չար մարդ է, անգութ որսորդ է, ուզում է սպա-  
նել անմեղ թռչունին, իր բարերարին: Եւ ճշմարիս որ  
այդ էր այն մարդու չար նպատակը:

Որսորդը չոքեց, տեղը պնդացրեց և հրացանը երե-  
սին բռնեց: Հէնց մատը դրեց կայծառի ոտքին և ուզեց  
քաշել, գործը վերջացնել, այդ իսկ բոպէին կայծակը  
նման Մեղուն վրայ հասաւ. և չար որսորդի ձեռքն այն-  
պէս խայթեց, որ նա վեր ցատկեց: Նրա հրացանը նշա-  
նից շեղւեց և իր թնդիւնով անմեղ Աղաւնուն քնից զար-  
թեցրեց ու տեղից թոցրեց:

Այսպէս մեր մեզուն իր բարերարին վերահաս մահից  
փրկեց, ազատեց:

Ի՞նչ որ ցանես, այն կը հնձես:  
Արած լաւութիւնը չի կորչիւ:

### Փոքրիկ գառը

Մի փոքրիկ գառ, ձիւնի նման մաքուր, սպիտակ,  
Մի օր գնաց մօր հետ դաշտը, որ արածի:  
Դաշտ որ հասաւ, սկսեց թռչել քարերի տակ,  
Էլ չէր ուզում փոքր միջոց հանդիսու նստի.  
Այս ու այն կողմ վաղվելով չափ էր ընկնում,  
Թէ քար, թէ ժայռ, թէ փոս, թէ ձոր չէր հարցնում:  
—Որդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նրա մայրը.  
Զգնյշ կացիր, որդեակ, լսիր իմ խրատը:  
Բայց գառնուկը մօր ասածին ուշ չի դարձնում,  
Իր խաղան ու վաղվելն է շարունակում:

Եւ վերջապէս՝ երբ մօր խօսքին ականջ չարաւ,  
Սարին գլխին իր գժութեան պատիժն առաւ.  
Մի մեծ քար կար այնտեղ ընկած. նրա ծայրում  
Մեր գառնուկը թռչկոտելով խաղ էր անում,  
Մէկ էլ յանկարծ նրա վրայից գլորւեց,  
Ոտի մէկը տակովս էլաւ, կոտրւեց:

### Մեղուն ու հաւը

Հաւը Մեղւի վրայ ծիծաղելով՝ ասաց մէկ անգամ.

—Ի՞նչ անշնորհք ձանձ ես դու, ամբողջ օրը ծաղկից  
ծաղիկ ես թռչկոտում և ոչ մի բանի պէտք չես գալիս:

—Իսկ դու, Հաւիկ մարիկ, ի՞նչ ես շինում, հարցը թց  
Մեղուն:

—Միթէ չըգիտեմ, թէ ի՞նչ եմ շինում ես, քեզ նման  
պարապ-սարապ շեմ տըզտպում: Ես օրը մէկ ձու եմ ա-  
ծում, մէկ ձու. գիտեմ մէկ ձուն քանիսն է:

—Գիտեմ, գիտեմ, հասկացայ: Բայց ես մինչև հիմա  
կարծել եմ, թէ դու օրը հարիւր ձու ես ածում:

—Ի՞նչպէս կարելի է օրը հարիւր ձու ածել, ան-  
խելք Մեղու:

—Հապա եթէ քո ածածըդ ընդամենը մի ձու է, էլ  
ինչու ես հարիւր անգամ կըրկչում, թէ հայ հարաց, լը-  
սեցէք, որ ես ձու եմ ածել: Իմ կարծիքով՝ այդքան կըր-  
կըշալուն մի ձուն շատ քիչ է: Այնպէս չէ, իմաստուն  
Հաւիկ մարիկ:

—Բայց դու ի՞նչ ես շինում, դու, որ իմ մի ձուն  
քիչ ես համարում:

—Ես ի՞նչ որ շինում եմ, քեզ պէս կըրկըշալով շեմ  
յայտնում ուրիշներին: Ես վլուխս քաշ գցած, մէզը եմ  
շինում: Գիտեմ ի՞նչ է մեղըւ: Դա հաւի կերակուր չէ, քո  
խելքի բան չէ, Հաւիկ մարիկ:

## Բ ա ռ ա խ ա ղ

Պօղոսն ու Գետրոսը բառախաղի էին տալիս:  
 Պօղոսը վարժւած էր, իսկ Պետրոսը նոր էր սովորում:  
 Ահա թէ ինչպէս էին խաղում:  
 Պօղոս. Պետրոս—ասա, տունը:  
 Պետրոս. Տունը:  
 Պօղոս. Քեզ կծի շունը:  
 Պօղոս. Ասա—դուրը:  
 Պետրոս. Դուրը:  
 Պօղոս. Ընկնիս ջուրը:  
 Պօղոս. Ասա—պաս:  
 Պետրոս. Պաս:  
 Պօղոս. Ուտես թանէ սպաս:  
 Պետրոս. Էլ չեմ ասում. հիմա ես կըհարցնեմ քեզ:  
 Պօղոս. Լաւ հարցրու:  
 Պետրոս. Ասա—ծիտ:  
 Պօղոս. Ծիտ:  
 Պետրոս. Ուտես մախոխ:  
 Պօղոս. Այդ չեղաւ, Պետրոս. Ես ասում եմ ծիտ, դու ա-  
     սում ես մախոխ. այդ ի՞նչպէս կարելի է. տեսնում  
     ես՝ նման չեն. Դեռ սպասիր էլի ես կըհարցնեմ—  
     Ասա—ծիտ է:  
 Պետրոս. Ծիտ է:  
 Պօղոս. Պետրոսն անմիտ է:  
 Պետրոս. Է՛հ, էլ չեմ ասիլ, ես անմիտ չեմ:  
 Պօղոս. Լաւ, շարունակենք, էլ այդպէս չեմ ասիլ:  
     Ասա—հաւ է:  
 Պետրոս. հաւ է:  
 Պօղոս. Պետրոսը լաւ է:  
 Պօղոս. Ասա—սա՞նձ:  
 Պետրոս. Սանձ:  
 Պօղոս. Պետրոսն ուտի տանձ:  
 Պետրոս. Հիմա ես կըհարցնեմ: Ասա—սամի՞:  
 Զօղոս. Սամի:  
 Պետրոս. Շաբարը ծամի՞

**Պետրոս. Ասա—հաց:**

**Պօղոս. Հաց:**

**Պետրոս. Մի քիչ կաց:**

**Պօղոս. Է՛հ, բաւական է, դու լաւերը չես իմանում:**

## Ուսումնարան

Դաշտը սիրուն է դալար բոյսերով  
 Եւ անուշահոտ գոյն-գոյն ծաղկներով:  
 Ուսումնարանը նոյնքան սիրուն է  
 իր ուշիմ, խելօք, ժիր մանուկներով:  
 Սիրուն է ծառը կանաչ ճղներով,  
 Փունջ-փունջ կախուաւած իր պտուղներով.  
 Ուսումնարանը նոյնքան սիրուն է  
 իր առաքինի, խելօք սաներով:  
 Աստւած, պահպանիր դու շտա օրերով  
 Մեր անդաստանը իր մշակներով,  
 Եւ մենք նորանում զուգւինք, զարդարւինք  
 Գեղեցիկ ուսման գոյն-գոյն փունջերով:

## Ոսկի և երկաթ

Ոսկին երկաթին անարգելով, ասեց մէկ անգամ.  
 —Երանի զիտենամ, դու ինչացնւ ես, որ մետաղների  
     կարգն ես ընկել. քո մե ու ժանդոտ երեսովը մարդու  
     վրայ զզւանք ես բերում: Նայի՛ր ինձ վրայ. տես՝ ինչպէս  
     գեղեցիկ եմ փայլում, ինչպէս շողշողում: Նայիր մեր սի-  
     րուն օրիորդների ու հարմաների ականջներին ու մատնե-  
     րին, դու կըտեսնես իմ փառքն ու պատիւը. նայիր նրանց  
     ձակատների շարքերին, դու կըտեսնես իմ փայլն ու գե-  
     ղեցկութիւնը. նայիր նրանց պարանոցներին ու կուրծքե-  
     րին, դու կըտեսնես իմ մանեակների ու շղթաների նըր-  
     ըութիւնը: Չեմ հաշւում գինզերը, գնդասեղները. գի-  
     տեմ որ դու այնքան կոշտ ու կոպիտ ես, որ այսպէս  
     քնքուշ բաների մասին ոչ ճաշակ ունիս, ոչ հասկացո-  
     ղութիւն: 

Երկաթը պատասխանեց Ոսկուն.

— Ես չեմ ուրանում, Ոսկի աղա, որ դու գեղեցիկ ես, ամեն բանի զարդն ու զարդարանքը դու ես, գինը շատ բարձր է, աղքատի բան չես, բայց ինչու ես չափիցդ գուրս գոռոզանում: Քո սիրուն օղակներդ ոչ ականջի լսելիքն են աւելացնում, ոչ քո մատներին ու կոներին զօրութիւն ու ժրութիւն են տալիս: Ճակատների փայլուն շարքերը գլխին խելք չեն տալիս. ոչ կուրծքերի նուրբ մանեակները սրտին գութ ու խնամք:

Ի՞նչ ասեմ մեր օրիորդներին, որ քեզ այդ չափ պատիւ են տալիս, քեզ համար հալւում, մաշւում ու բարձրակացաւ ընկնում: Իմ մի փոքրիկ ասեղը քո բոլոր զարդարանքներից աւելի է օգուտ տալիս: Գիտես, Ոսկի աղա, իմ փոքրիկ ասեղը քանի՛ տուն է պահում, քանի՛ որքի կերակրում: Իմ խովին ու ձեիչը ամբողջ աշխարհքին հաց են տալիս: \*

Մարդիկ ինչ որ շինում են, կամ պէտք է կտրեն, կամ պէտք է ծեծեն, կամ պէտք է սղոցեն, կամ պէտք է խարտոցեն, կամ պէտք է կարկատեն: Իմ ուրագն ու կացինը որ չըլինին, իմ դուրն ու շաղափը, իմ սղոցն ու մուրճը, իմ կտրիչն ու խարտոցը, էլ կարսղ էին մարդիկ քար քարի վրայ դնել, փայտ փայտի վրայ:

Ահա այսպէս պարծենկոտ ես դու, Ոսկի աղա, քո փայլից կուրացած՝ ուրիշի լաւութիւնը չես տեսնում: \*

### Երկ պանդիստի

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու զարնան սիրուն թռչնակ,  
Գէպի մւր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ.  
Արի, թռիր, ծիծեռնակ, ծնած տեղս՝ Աշտարակ,  
Անդ շինիր քո բունը—հայրենի կտուրի տակ:  
Անդ հեռու ալեոր հայր ունիմ սգաւոր,  
Որ միակ իւր որդուն սպասում է օրէցօր:  
Երբ տեսնես դու նորան, ինձնից շատ բարե արա,  
Ասա թռղ նստի լայ իր տնբախտ որդու վրայ:

Դու պատմիր, թէ ինչպէս առտ անտէր ու խեղճ եմ ես,  
Միշտ լալով, ողբալով, կեանքս մաշւել եղել կէս:  
Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը,  
Գիշերը թաց աշքիս քունը մօտ չի գալիս:  
Շուտով սառ հողի տակ կըպառկեմ այստեղ մենակ.  
Թողնելով հօրս սրտում ցաւալի յիշատակ:  
Դէհ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, գնա արագ  
Դէպի հայոց աշխարհը, ծնած տեղս Աշտարակ:

### Արշակի շարադրութիւնը

Երկար ժամանակ սպասում էի, թէ երբ պէտք է ինձ ուսումնարան տանեն: Ուսումնարանի մօտովս անցնելիս՝ որ լսում էի աշակերտների երգելու ձայնը, սիրտս մի ուրիշ կերպ էր դառնում, մտքումս ասում էի, ախ, երբ կըլինի, որ ես էլ սրանց մէջը լինիմ, սրանց պէս կարդամ, սրանց պէս երգեմ, սրանց հետ խաղամ. արդեօք կարժանանամ այն օրին:

Վերջապէս փափագիս հասայ. հայրիկս մի առաւօտ յայտնեց, թէ երկուշաբթի օրը քեզ տանելու եմ ուսումնարան և այսօր պէտք է գնամ քո ուսման պիտոյքներն առնեմ: Այն օրն էլ ես հաց չըկերայ չափազանց ուրախութիւնից:

Երեկոյին հայրս եկաւ տուն: Ի՞նչ ասես որ չէր առել ինձ համար.—թուղթ, թանաք, թանաքաման, գասագիրք, տեսակ-տեսակ զրչածայրեր, զրչակոթրը, մատիտներ, տեսրակներ: Բոլորը չոկ-ջոկ թղթերում փաթաթեցի ու դրի պահարանումս, մինչև հասաւ երկուշաբթին՝ ուսումնարան գնալուս օրը:

## Ն ո ր տ ա ր ի

Ահա հասաւ նոր աարի,  
Հետը բերաւ նոր բարի,  
Մանր տըղոց ուրախ օք,  
Բարի զաւակ հօրն ու մօր:

Մանր տղայքն են ուրախ,  
Ունին կաղին գողինաղ,  
Սալորի չոր, չամիչ, թուզ,  
Փշատ, ունաբ և ընկուզ:

Մանր տրդայք չըմոռնաբ,  
Աշխարհումս չէք մենակ.  
Ուրիշ շատ խեղճ տղայք կան,  
Աղքատ ու անօդնական:  
  
Նոքա հայր ու մայր չունեն.  
Սև չոր հացի կարոտ են.  
«Աղքատներին ողորմած  
Եղէք», կասէ ձեզ Աստւած:



## ԱՌԱԽՈՏԻԱ ԱՂՕԹՔ

Ով Տէր մեր գթոտ, Գու լոյս առաւօտ,  
Ծագիր և մեզ մօտ Քո լոյսդ անաղօտ:  
Թող լուսաւորւին մեր միտքն ու հոգին,  
Որ քո լոյս անւան լինինք փառաբան:

Յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ. ամէն:

## ՏէՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր, Որ յերկինս ես, սուրբ եղիցի  
անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին  
կամք Քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր  
հանապաղորդ տուր մեզ այսօր. թող մեզ զպար-  
տիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պար-  
տապանաց. և մի տանիր զմեզ ի փորձութիւն,  
այլ փրկեա զմեզ ի շարէ. զի Քո է արքայու-  
թիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

+ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՋԹՔ

Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,  
 Դու ինձ ամեն ճը տաս հազար բարի—  
 Կեանք, լոյս, կերակուր, հայր ու քաղցրիկ մայր,  
 Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր:  
 Իսկ ես ինչ ունիմ որ ինչ տամ Քեզի·  
 Առջևող կընկնիմ, կենամ աղօթքի—  
 «Ճնորհդ տուր ինձ, որ ծնողներիս,  
 Վարժապեաներիս և իմ մեծերիս  
 Լինիմ սիրելի, իսկ Քեզ՝ հաճելի»: +



204

Ժմ

0

Ար

2013

3206

«Ազգային գրադարան»



NL0060708

